



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ԳԵՂԱԾՈՒ ՍԱՐՅԱՆ

ՈՏԱՐ ՄԱՐԴԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ, 1929 թ.

94901 4020

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ



ՈՏԱՐ ՄԱՐԴԸ

10000
A $\frac{1}{8884}$



Հր. № 932, Գրառեղվար № 2107 բ : Տիրած 2000.

Պետերատի առաջին տպարան Վաղարշապատում.

Պատվեր № 94:

Նա քաջլուծւած և զավառական քաղաքի մարդաշատ փողոցներէց մեկով, նրա քաջլվածքը դանդաղ և և շուրջը տիրող աշխուժ յերթեկոթյան մեջ աչքի չե ընկնում այդ:

Հնամաշ գզեստները, վորոնք ծածկված են անփորձ ձեռքով կարված տարբեր գույնի կարկատաններով, լավ բան չեն լինթադրել տալիս նրա դրության մասին, իսկ խորն ընկած խաժ աչքերն արտահայտում են անորոշ մի թախիծ: Դա 1922 թվի սեպտեմբերին էր:

Թե հիմ և նա, այդ մասին զավառական քաղաքի բնակիչները վոչինչ չգիտեն, ինչպես նա, վոր չի ճանաչում այն բոլոր անձնավորություններին, վորոնք շտապ-շտապ անց ու դարձ են անում նրա շուրջը:

Նրա առաջին և միակ ծանոթը՝ դա քաղաքի հեռավոր ծայրամասում ընկած պանդոկի տերն է, վորի պանդոկում յոթերորդ գիշերն է լուսացրել արդեն. մի ծանոթ, վորից սրտնեղությունից բացի ուրիշ սպասելիքներ չունի նա:

Այժմ էլ, ամեն որվա նման, միքանի հիմնարկություններ մտնելուց հետո, մտադրադ ու դանդաղ քայլերով դիմում է դեպի քաղաքային ազգին, ուր նա սովորաբար անց և կացնում իր ժամերը:

խանութներէ զեղեցիկ դարդարված ցուցափեղկերը մեկ-մեկ նրա ուշադրութիւնն են գրավում. նա կանգ ե առնում այս կամ այն խանութի առաջ, նայում ե ապակեպատ ցուցափեղկերում դրված հագուստներին, ուտելիքներին ու պահ մի դիտելուց հետո շարունակում ե իր ճանապարհը:

Ծուցափեղկերից մեկում, մի հայելի կարծես չարախնդորեն արտացոլեց նրա պատկերն իր մեջ: Միթե այդ հայելին հիշեցնել ե ուզում նրա ձախող դրութիւնը, ուզում ե յերեսին շարտել նրա խեղճութիւնն ու թշվառութիւնը. այդ դառը հեգնանքը նա կարդաց հայելու մեջ, չերբ տեսավ իր յերկարած մորուքը, գունաթափ աչտերն ու տրտմութիւն արտահայտող աչքերը ե մորմոքով հեռացավ ցուցափեղկի առաջից:

Անցորդներէ բազմութեան մեջ մեկ-մեկ ասեղի պես ծակող հետաքրքիր հայացքներ են ուղղվում նրա աչքերին. ինչո՞ւ. միթե նրանք գիտին, վոր ինքը նորեկ ե, գործազուրկ, վոր տմեն որ մի շարք հիմնարկութիւններ ե մտնում գործ խնդրելու, բայց այդ նրան չի հաջողվում:

Ահա նա մտնում ե քաղաքային այգին, նստում ե այգու նստարաններից մեկի վրա, ամբրիկյան հնամաշ կեպին բարձրացնում ե ճակատից, գրպանից ինչ վոր թղթի կտոր ե հանում ու միքանի մասի բաժանելուց հետո, չորացած մի տերե ե փշրում թղթի մեջ ու վորորում. լուցկի չունի նա:

— Յերևի ծխող մի մարդ կանցնի այգու միջով — մտածում ե Արեւյանը ու «ծխախոտը» նստարանի չեզրին դնելով, սպասում ե ցանկալի անցորդին:

Դեղին սաղարթը ծածկել ե այգու ծառուղիները.

սեպտեմբերի քամին սլոկում և նրանց ծառերից ու խշխշացնելով քշում, կուտակում և փոսերի ու ցամաք առուների մեջ:

Նա դիտում և ծառերից թափվող չորացած տերևները և վալը ընկնող ամեն մի տերևի հետ նրան թվում և, վոր ինքը կորցնում և ինչ վոր բան, ինչ վոր հուսահատ տրամագրութուն և իջնում իր վրա:

Դիմացի ծառից մի քանի տերև վալը ընկավ, իսկ կողքի ալելով ծխախոտի կապույտ ծուխը փչելով, մոտենում և վալելուչ հագնված մի լերիտասարդ:

Անծանոթը վորոնող հայացքով նայում և աջ ու ձախ, նա մոտեցավ և տեղավորվեց միևնույն նստարանի վրա:

— Կարելի՞ չե վառել—քաշվելով դիմում և Արելյանը:

— Խնդրեմ, — պատասխանում և նորեկը ու մխայող ծխախոտը դեմ անում:

Ֆերկու ծխախոտներն իրար են հանդիպում. նրանցից մեկը նորմալ և վալելուչ ծխախոտ և, իսկ մյուսը պատրաստված և սովորական թղթից ու ծառից վալը ընկած չորացած տերևից. նրանք լերկուսն ել նման են իրենց տերերին, սակայն լերկուսն ել մխում են արդեն:

Արելյանն ակնածությամբ դիտում և նորեկին, վոր անհատաբար կերպով դեռ ու դեն և նայում. ըստ լերկույթին նա վորոնում կամ սպասում և մեկին:

— Լսեք, ընկեր, այստեղից կանաչ գլխարկով կին չի՞ անցել:

— Չեմ տեսել, — պատասխանում և Արելյանը:

Անծանոթը ժամացույցին և նայում:

— Նա ժամի չերեքին պիտի գար, իսկ այժմ չերեքից բավականաչափ անց ե,—կարծես ինքն իր համար շշնջում ե նա:

— Դուք տեղացի՞ չեք, ընկեր,—դիմեց Աբելյանը:

— Վոչ, Թիֆլիսեցի չեմ, բայց աշխատում եմ այստեղ. իսկ դժուր:

— Ռոստովից եմ չեկել:

— Յերևի աշխատելու, այո:

— Այո:

— Իսկ գործ գտել ե՞ք արդեն:

— Վոչ դեռևս:

— Աբելյանն սպասում ե, վոր անծանոթը գուցե իրեն վորեւ գործ կառաջարկի. բայց նա վրա չե բերում.

— Դժվար ե պաշտոն գտնելը, իդուր եք հեռացել Ռոստովից:

Այդ բոլորին դիմացի ծառից մի քանի տերեւ ե վայր ընկնում, իսկ կողքի ալեյով, սեթեւեթ քայլվածքով մոտենում ե կանաչ գլխարկով կինը:

— Կույա,—նստարանից բավականաչափ հեռու լսվում ե նրա հնչուն ձայնը:

Կույան բարձրանում ե տեղից ու արագ քայլերով մոտենում նրան: Նրանք հեռանում են այգուց, իսկ Աբելյանը չերկար ժամանակ նայում ե նրանց չետից:

Շուտով իրիկունը վրա չե հասնելու, իրիկնային աղջամուղջը սև վրանի նման իջնելու չե չերկրի վրա:

Աբելյանը քաղց ե գդում. չե՞ վոր նա այսոր վոչինչ չի կերել. ադդ պատճառով ել ներսից ինչ վոր բան անհանգիստ ե անում նրան, ստեղծագործական վոչ մի կոպեկ չունի նա:

Ահա արևի սկավառակը թագնվում է լեռների
լեռնում, վերջին դժգուշն ճառագայթները թույլ կեր-
պով խաղում են ամպերի քուլաների վրա ու հետզհետե
կորչում, անհայտանում. վրա լի հասնում իրիկնային
կիսամութը, մեկ-մեկ աստղեր են կայծկլտում արդեն
լերկնակամարի վրա և վառվում են քաղաքի լուսերը,
վորոնք հեռվից դեղեցիկ արևածաղիկների լեն նմա-
նում:

Քաղաքային ալգում հետզհետե բազմանում են
դրոսնոդ հասարակութայն խմբերը և ալգին թնդում է
աղմուկից:

Արևլանը ծուլ-ծուլ բարձրանում է տեղից և
քալերն ուղղում դեպի փողոց: Փողոցում կյանքը չե-
ռում է. մարդիկ սովորականից ավելի ուրախ են լերե-
վում Արևլանին, նրան թվում է, վոր ինքն ամենա-
լավ պայմաններում չերբեք այնքան ուրախ չի լեղել,
ինչպես, որինակ, այն գիրուկ լերիտասարդը, վոր քալ-
լում է այն շիկահեր աղջկա կողքով և ինչ վոր բան է
պատմում նրան. կամ ինքը չերբեք այնքան լիաթոք
կերպով չի ծիծաղել իր կյանքում, ինչպես այն խու-
ճուճ մազերով կոմսոմոլիստը՝ իր ընկերների շրջանում:

Փողոցի մեջտեղով մի մարդ ահագին մի հաց
թևի տակ դրած քալում է. նրա ձեռքին մի զամբյուղ
կա, վորի մեջ ուրախ ժպտում են կարմիր խնձորները.
զարմանալի չե, վոր այդ մարդը բոլորովին չի մտա-
ծում ուտելու մասին. չե՞ վոր հենց այս բոպելին նա
կարող է կտրել հացի մի ահագին և լավ կտոր ու ծա-
մել. նա կարող է նույնիսկ ուրիշին բաժին հանել իր
հացից, չեթե ուզի. բայց նրա զեմքի վրա ալգայիսի
մտադրութուն չի կարգացվում. նա կարծես ամենևին

Ի ս ո ղ ր ու թ Յ ու Ն չ ու Ն ի վ ո չ ու տ ե լ ու, վ ո չ ե լ հ Յ ու ր ա-
ս ի ր ե յ ու վ ո Ր ե ե մ ե կ ի ն ։

Ահա և լուսավոր ու մաքուր ճաշարանը, վորտե-
ղից լսվում ե լ ա ղ ա վ ո Ր ն վ ա գ ա խ մ ը ի ու ղ ա խ ն վ ա գ ի
ձ ա չ ն ը, մ ի յ ե Ր ի տ ա ս ա ղ զ ջ ա հ ե լ մ ի կ ն ո ջ հ ե տ մ ա ն ու մ
ե ն ա չ ն տ հ ղ, ն ղ ա ն ջ չ ե ն շ տ ա պ ու մ, կ ի ն ը մ ի պ ա հ կ ա ն գ
ե ա ու ու մ մ ու տ ը ի դ ի մ ա ց ի պ ա տ ի ն ա մ ղ ա ց ղ ա ծ մ ե ծ
հ ա յ ե լ ու ա ո ա ջ և ու ղ ղ ու մ մ ա ղ ե Ր ը, ա ղ ղ ո ջ Լ Բ ն չ ու տ ե ն
ն ղ ա ն ջ ճ ա շ ա ղ ա ն ու մ, վ ո Ր լ ա վ լ ի ն ի, լ ա վ հ Յ ու թ ա լ ի
Ր ի Ֆ շ տ ե ք ս հ ե տ ը կ ա ն ա չ ի ու մ ի ք ա ն ի շ ի շ գ ա ղ ե ջ ու ղ,
հ ի ա ն ա լ ի յ ե, կ ա մ խ ո Ր ո վ ա ծ ի ղ ա մ ղ ո ղ ս ա ղ ու կ ա ղ-
գ ո վ, տ ա պ ա կ ա ծ ճ ու տ, ս ա ա մ ե ն ի ց ն պ ա տ ա կ ա հ ա ղ մ ա ղ ն
ե և յ ե Ր ե ի ն ղ ա ն ջ կ ղ զ ա ն ա յ ղ և յ ե Ր ի տ ա ս ա ղ ղ մ ե-
ն ի ու Ն հ պ ա ղ ու կ ե Ր պ ո վ ս ե ղ ա ն ի վ ղ ա կ ղ ն ի ու ղ ա ղ ղ
ձ ա չ ն ո վ կ պ ա տ վ ի Ր ի մ ու տ ե ց ո ղ ա Ֆ ի ց ի ա ն տ ի ն ։ « Բ ե ղ ե ք
տ ա պ ա կ ա ծ ճ ու տ 2 Բ ա ժ ի ն, կ ա ն ա չ ի, 2 շ ի շ գ ա ղ ե ջ ու ղ
և մ ի լ ի մ ո ն ա ղ... Այ ո, ա ն պ ա յ մ ա ն ա յ ղ պ ի ս ի պ ա տ վ ե Ր
կ տ ա ա յ ղ յ ե Ր ի տ ա ս ա ղ ղ, վ ո Ր մ ի ջ ա հ ե լ կ ն ո ջ հ ե տ ն ե Ր ս
մ տ ա վ ճ ա շ ա ղ ա ն ։

Ա ղ ե լ չ ա ն ը Բ ա վ ա կ ա ն ա չ ա փ հ ե ո ա ց ի և ա ղ ղ ե ն ճ ա-
շ ա ղ ա ն ի ց, Բ ա յ ց գ ա ղ մ ա ն ա լ ի յ ե, վ ո Ր ա յ ղ ք ա ն հ ե ո ա վ ո-
ր ու թ յ ա ն վ ղ ա լ ս վ ու մ ե դ ե ո ճ ա շ ա ղ ա ն ի ց հ ն չ ո ղ ն վ ա-
գ ա խ մ ը ի ձ ա չ ն ը, մ ի ն չ և ա ն գ ա մ շ շ ե Ր ի ն ու Բ ա ժ ա կ ն ե-
ր ի ն կ պ չ ո ղ դ ա ն ա կ ն ե Ր ի ճ ն կ ճ ն կ ո ց ը, ն ու չ ն ի ս կ ի ղ ա ղ
յ ե տ ե ի ց հ ն չ ո ղ « ս ի չ ա ա »- ն ե Ր ը, ա յ ղ շ ա տ գ ա ղ մ ա ն ա լ ի յ ե,
ն ա հ ի շ ու մ ե, վ ո Ր մ ի հ ա ղ ս ա ն ի ք ի ժ ա մ ա ն ա կ՝ յ ե Ր ը ի ն ք ը
հ ե ո ա ց ե լ ս ե ն յ ա կ ի ց, Բ ա կ ու մ չ ի լ ս ե լ հ ն չ ո ղ յ ե ղ ա ժ շ տ ա-
լ ա մ ը ի ձ ա չ ն ը, կ ա մ ա վ ե լ ի շ ու տ՝ ձ ա չ ն ը Թ ե Թ ե կ ե ղ ա ղ ո վ
լ ս ե լ ե, Բ ա յ ց չ ի կ ա ղ ո ղ ա ց ե լ վ ո Ր ո շ ի լ, Թ ե Լ Բ ն չ ե ն ն վ ա-
գ ու մ ։

Արդեն նա քայլում է քաղաքի կենտրոնից հեռու
ընկած խուլ փողոցներով, ուր լուսերը սակավ են և
գիշերվա խավարն իշխող է ալնտեղ. նա հեռվից տես-
նում է իջևանի դռան գլխին փայլող ելեկտրական
լամպի աղոտ լույսը. շուտով ինքը կհասնի ալնտեղ,
ուշագիշեր կերպով դռնից կդննի բակը և չերբ կտեսնի,
վոր իջևանի տերը չի լերևում, գողեգող ներս կմտնի,
կզնա ալն սենյակը, ուր գիշերում է ինքը. հեռու կը-
հանվի, անկողին կմտնի ու գլուխը վերմակի տակ
կոխած՝ անձնատուր կլինի իր մտքերին:

Իջևանի բակը հանգիստ է. վոչ վոք չի լերևում
ալնտեղ. դիմացի չերկու սենյակում լուսերը դեռ
չեն մարել. բայց դրանից վոչ մի ֆլաս չկա: Աբել-
յանը թիթե քայլերով, ստվերի պես անցնում է բակի
միջով և ներս մտնում սենյակ. չերկու ուրիշ թախտե-
րի վրա խռմփում են չերկու ուրիշ «հլուրեր»: Աբել-
յանը վառում է լույսը, հանվում ու պառկում է քնե-
լու: Այդ բոլորը կատարվում է արագ և Աբելյանը գոհ
է այդ բոլորից:

*
* *

Գիշերը սահում է դանդաղ, գիշերը չի լուսանում.
սենյակի չերկու պատի տակ չերկու քիթ խռռաց-
նում ու խանդարում են տիրող լուռթյունը. դրսից մի
շան աղիողորմ կաղկանձոցն է լսվում և ելեկտրակա-
նի խուլ հեքը: Աբելյանի քունը չի տանում. նա շուռ
ու մուռ է գալիս անկողնի մեջ:

— Հի, հի, հի... — Աբելյանի դեմ հռհռում է մի
մարդ, այդ նա չե, Աբելյանը ճանաչում է նրան. այդ
մարդը չերկույան մի մեծ հաց եր գրել թևի տակ և

ձեռքին ծանրաբեռնված մի դամբուղ ունենր. իսկ այժմ նա ծամուժ է ձեռքի հացի կտորը և ծամածուլթյուններ անում Արեւյանի դեմ. նրա աչքերը, վոր այնքան զզվելի չեն թվում նրան, հետզհետե մեծանում են. Արեւյանը լսում է նրա հռհռոցը:

— Կորցվիր աչքիցս,— շշնջում է Արեւյանը ու ձեռքով ճակատը շփում:

— Հի, հի, կորցվե՞մ, սո, հաց սո, չե՞ս ուզում, դու սոված չե՞ս,— և նա հացի կտորը մեկնում է Արեւյանին. Արեւյանը նայում է ուղիղ նրա աչքերին, նայում է ու ինչ վոր խոսքեր է ասում նրան. բայց ահա և ուրիշները. նրանք բոլորն ել մարդիկ են, բայց տարորինակ մարդիկ:

— Ա՛, բարե ձեզ. — լսում է նրանցից մեկի ձայնը, — չե՛ս, ձեզ ճանաչում եմ. դուք ամեն ուր գալիս եք ինձ մոտ. դուք գործ եք խնդրում, այնպես չե՞...

— Դուք գործ եք խնդրում...

— Դժբո՞ւ...

— Աշխատե՞նք...

— Հի, հի, հի, հի... աշխատանք...

Հռհռում են նրանք իրար յետևից ու կուտակվում իրար վրա: Արեւյանը շուռ է գալիս անկողնի մեջ, աչքերը փակում է, վոր չտեսնի այդ բոլորը, գլուխը վերմակի տակ է կոխում, վոր չլսի այդ խենթացնող հռհռոցը, բայց աչքերի մեջ ել կարծես նրանք են. ահա կրկին նա, հացի նուշն կտորը ձեռքին ծամածուլած կերպարանքով մարդը, վոր ծամում է ագահորեն...

— Ա՛, հաց սո... սո, այնպես ծամիր, կեր, կըշտացիր... հի, հի, հի... — և նրա աչքերը հետզհետե մեծանում, լայնանում են...

Գիշերը սահում է դանդաղ։ Արեւը կրկին շուտ է դալիս տեղի մեջ, նստում. լերկու պատի տակ լերկու քիթ խռոպոցում ու խանդարում են տիրող լուսթյունը։

— Ախ, ինչո՞ւ գիշերը չի լուսանում...

II

Յերրորդ անգամ դռների առաջ իջևանի տերն սպառնում է Արեւյանին։

— Գործը դատարան կտամ,—ասում է նա և հալացքն ուղղում Արեւյանի աչքերին։

Արեւյանը խոսք չի գտնում նրան պատասխանելու, իսկ իջևանի տերը չգիտես ինչու փոխում է իր տատճը.

— Շորերդ գրավ կվերցնեմ, իսկ դու ուրիշ տեղ քնի։

Արեւյանը կարմրում է. ի՞նչ պատասխանի ալդ մտրդուն, վոր ալնքան սպառնալի կերպով նալում է իր աչքերին։

— Միքանի որ ել...

— Վո՞չ մի որ. չես արդեն ասացի։

Արեւյանը չի շարունակում ալլես և դանդաղ քալելով առաջ է շարժվում։

Յերեկ նա շուկա հանեց իր չերեսսրբիչն ու վերջին շապիկը և ստացած դրամի մի մասով ապրեց չերեկ, մյուս մասն էլ ալսոր կծախսի. իսկ ի՞նչպես վճարել իջևանի վարձը, վո՞րտեղ գիշերել ալսորվանից։

Մտքերով ծանրաբեռնված քալում է նա և սովորականի պես մտնում է հիմնարկից հիմնարկ. ալդ որն էլ վո՞չ մի հիմնարկությունից դրական պատասխան

չի ստանում, այդ որն ել սովորականի պես անհույս ու սովորական որ եւ սովորականի պես այդ որն ել նա քայլերն ուղղում եւ դիպի քաղաքային այգին, վորտեղ այգու ծառերն ել տխուր են, թուլլ, կիսաքաղց, ինչպես ինքը:

Աշնան գունատ արեւը վողողել եւ այգին. Արելլանը նստում եւ արևոտ մի նստարանի վրա, վորտեղ նստած եւ նաև մի ծերունի, վոր ռուսերեն մի լրագիր եւ կարդում. ծերունու հագուստներից չերևում եւ, վոր նա նախկին զինվորական եւ. կանաչագույն կտորից կարված տուժուրկայի ուսերի վրա չերևում են ուսադիրների քառանկյունի տեղերը, հաստ եւ մուգ կապույտ մահուդից կարված անդրավարտիկը չերիզված եւ կարմիր լեւերով, իսկ լայնեղը ֆուրաժկայի ճակատին ամրացրած կոկարդի տեղը դեռ բոլորովին չի խուճացել:

Պատկառելի դեմքով մի ծերունի չեւա, հաղթանդամ, թիկնեղ ու բարձրահասակ. նրա ձյունի պես ճերմակ բեխերը միացել են ականջատակերից սկսվող մորուքի հետ, վոր փառահեղորեն փովել եւ նրա կրծքի վրա:

Արելլանն ուշադիր կերպով զննում եւ ծերունուն. քիչ հետո ծերունին ծալում եւ լրագիրն ու գրպանը դնելով հենվում նստարանի հենարանին:

Արելլանին ծանոթ եւ թվում այդ ծերունին. նրան թվում եւ, վոր մի տեղ տեսել եւ նրան, խոսել եւ նրա հետ, բայց չի համարձակվում խոսեցնել:

Արելլանը շարունակում եւ զննել ծերունուն. «անպայման նա չեւ. ճիշտ այն պատկերի նման, վոր փակցրած եր իրենց հյուրասենյակի պատին», մտածում եւ Արելլանը ու ռիսկ եւ անում խոսել նրա հետ:

— Ներողութիւնն, դուք զենեւրալ Կարագուլովը
չե՞ք. — մինչև ականջները կարմրում ե Արեւլանը ու
անհամարձակ հայացքն ուղղում ծերունուն:

Ծերունին տարակուսում ե, զեմքի կնճիռները
կուչ են գալիս:

— Իսկ դուք ճանաչում եք նրան, — խոպոտ ձայ-
նով հարցնում ե ծերունին:

— Կարագուլովին, լես նրան լավ եմ ճանաչում.
Նրա նկարը նուշնիսկ ունեւինք մեր տանը:

— Դուք վճռեղացի լեք:

— Հայրս Յերեանի շրջանի գլուղերից ե, իսկ
լես ծնվել եմ Ռոստովում, մենք ապրում ելինք աչն-
տեղ:

— Դուք չերի վաճառական Դավիդովի վորդին
ե՞ք...

Արեւլանի աչքերը փալկեցին, սիրտն արագ կեր-
պով խփել սկսեց:

— Այն. դուք մեր տանը շատ եք լեղել. բայց
վճրքան ծերացել եք, սկզբում լես կասկածում ելի,
բայց չերկար նաւելուց հետո ճանաչեցի:

— Կենդանի՞ լես այժմ ձեր հայրը:

— Հայրս կաթվածահար լեղավ, չերբ բայլչեիկ-
ները գրավեցին մեր ունեցածը, — խեղդված ձայնով
շշնջաց Արեւլանը ե լռեց:

Կարագուլովն անթարթ հայացքն ուղղում ե ա-
նորոշ մի տարածութան, կարծես հիշողութան մեջ
վերակենդանացնել ե ուղում ինչ-վոր բան, ապա
խզելով միքանի վայրկյանի լռութունը՝ հառաչում ե.

— Դո՛ւ, իսկ դուք այստեք ի՞նչ եք անում:

— Առայժմ անդործ եմ, չեմ կարողանում մի

պաշտօնն գտնել,— հուզմունքով շշնջում ե Արեւլանը:

— Ուրիշ ծանոթներ չունե՞ք հասել:

— Վճշ:

— Իսկ վճրտեղ եք ապրում, գիշերելու տեղ ունի՞ք...

— Գիշերում եմ իջևանում, այնտեղ, շուկայի մոտը...

Արեւլանի ձայնը դողում ե հուզմունքից, ըստ յերևույթին նա ազդվել ե այն վայրկյանից, յերբ Կարագուլոյն սկսեց իր հարց ու փորձը նրա դրուժյան մասին. նա հայացքը գետնին ե հառել ու վտաքի ծայրով տրորում ե գետինը:

— Այժմ յես մենակ եմ, աղջիկս Թիֆլիս գնաց յերեկ. դու կարող ես ինձ մոտ մնալ մինչև աշխատանք գտնելդ. հայրդ՝ հանգուցյալն ինձ շատ նեղ որերում ե ոգնել, գնանք,— Կարագուլովը բարձրանում ե տեղից:

Արեւլանը լուռ ե, նա հազիվ ե զսպում հուզմունքը. նա ուզում ե շնորհակալություն հայտնել և հրաժարվել Կարագուլովի մոտ գնալուց, բայց լեզուն չի հնազանդվում իրեն ու տեղից վերկենալով հետևում ե ծեր գնահրալին:

Կարագուլովի սենյակը մաքուր ե ու գեղեցիկ. յերկու հանդիպակաց պատերի տակ մեկնվել են յերկու մահճակալներ. սենյակի մեջտեղում դրված ե սեղանը, անկյուններից մեկում յեղեգնյա մի ետաժերկա, վորի վրա նիրհում են միջանի տասնյակ հաստ ու բարակ դրքեր:

Գնենրալ Կարագուլովը վառում ե կերասինկան ու թեյ դնում, իսկ մինչ այդ Արեւլանը դիտում ե պատերին փախցրած նկարները:

— Ահա, իսկ և իսկ սրա հատն եր մեր տան չի-
ղածը,—ասում և Աբելյանը, լերը նկատում և պատին
փակցրած Կարազուլովի նկարը:

— Դա լավ որերի հիշատակ և,—հառաչում և
Կարազուլովը ու մեկնվում մահճակալին, իսկ Աբել-
յանը տեղավորվում և նրա դիմաց՝ աթոռներից մեկի
վրա:

Այդ գիշեր նրանք չերկար խոսում ելին իրենց
անցած գնացած որերի մասին...

Կարազուլովի բնակարանում որերն անցնում են
միտրինակ: Ամեն որ, սովորական ժամին ծեր գենե-
րալը թերթ գնելու չե գնում, Աբելյանը՝ աշխատանք
գտնելու և աշխատիս իրար չետեից մթնում ու լուսա-
նում են որերը:

Յեւ լերը չերկուսն ել տանն են լինում, լերը
նրանք իրար հետ առորյա խնդիրների մասին են խո-
սում, Կարազուլովը խրատներ և կարգում հաճախ Ա-
բելյանի գլխին:

— Դու վարպետութուն պետք և գործ գնես
կյանքում, դու չերիտասարդ ես դեռ, պետք և ճկուն և
հարմարվող լինես և կարողանաս հանգամանքից ոգտ-
վել,—ամեն առիթի դեպքում խրատական տոնով
կրկնում և Կարազուլովը և փորձված մարդու հայաց-
քով նայում Աբելյանի աչքերին:

Այդպիսի բոպեններին Աբելյանը լինում և լուռ ու
մտածկոտ, լսում և նրան ու գլուխը տմբացնելով հա-
վանութուն տալիս Կարազուլովի ասածներին:

— Հայրդ, հանգուցյալը, ճարպիկ առևտրական
եր, նա կարիք չեղած դեպքում սուտ եր խոսում,
պետք չեղած դեպքում կեղծավորութուն եր անում

կամ հայհոյում և այդ ձևով գործ եր գլուխ տանում. կյանքում հաջողութուն ունենալու համար այդպես պետք է լինել, սիրելիս,—հանդարտ տոնով շարունակում է Կարագուլովը:

Կարագուլովի խոսքերը միշտ հնչում են Արեւլանի ականջին. մենակ ժամերին նա մտածում է փորձված ծերունու այդ խորիմաստ խոսքերի վրա և համոզվում, թե վորքան ճիշտ է ըմբռնում Կարագուլովը գրողթյունը:

— Մի՞թե քիչ են կյանքում այնպիսիները, վորոնք հարմարվում են դրության հետ, ճարպիկ կերպով ուշադրութուն են գրավում և հետզհետե առաջ քաշվում, լավ դիրք ու կարյերա չեն ստեղծում իրենց համար. այո, քիչ չեն, և իրավացի չե Կարագուլովը, վոր ասում է—կյանքում հաջողութուն ունենալու համար այդպես պետք է լինել:

Արեւլանը հաճախ է մտածում այդ բոլորի մասին, և վորքան շատ է մտածում, այնքան ավելի հավատալի ու ճշմարիտ են թվում նրան Կարագուլովի խոսքերը:

Մի ուր, յերբ ծեր գնեհրալը ճաշ պատրաստելու աշխատանքով եր գրադված՝ սենյակի դուռն աղմուկով բացվեց ու Արեւլանը ներս մտավ: Կարագուլովը չերբեք Արեւլանին այդպիսի տրամադրությամբ չերտեսել. այդ ուրն Արեւլանի դեմքին ուրախության մի ժպիտ եր փայլում, աչքերը կարծես կենդանութուն ելին ստացել և դեմքի մկաններն ուրախութունից շարժվում ելին:

Արեւլանի ձեռքին քառածալ մի թուղթ կար:

— Խնչպես յերևում է, լավ բան է պատահել քեզ այսոր, Վահրամ,—ուրախ տոնով դիմեց նրան Կարագուլովը:

— Ահա, տես, վերջապես... վերջապես գլուխ լե-
կավ,—հեալով ասաց Արեւյանը, ձեռքի գրութիւնը
մեկնելով կարագուլովին:

Կարագուլովը դողացող ձեռքերով գրութիւնն
աչքերին մոտեցրեց, սակայն բացի բլանկի ռուսերեն
բառերից չէին հկարողացաւ կարդալ:

— Հա, հա, հա, հա, հա, հա կարողանում կարդալ,
դե լսիր. վաղվանից դործի, հասկանում ես ինչ և սա,
գործի, աշխատանքի...—բարձր տրամադրութեամբ ա-
սաց Արեւյանը և գրութիւնը յետ վերցրեց Կարագու-
լովից:


— Այ թե հաջողվեց հա, դեհ, հիմա քեզ տես-
նեմ, առաջ գնալու բոլոր միջոցները քո ձեռքին են,
թե ճարպիկ չեղար, կապրես, թե չե... ով իմանա ինչ
կլինի,—իր ուրախութեան հետ չմոռացաւ Կարագուլովը
կրկնել նաև իր խրատները:

Արեւյանն անհանգիստ եր. նա մոտեցաւ աթոռ-
ներից մեկին, նստեց միքանի վայրկեան, ապա կրկին
բարձրանալով տեղից, սկսեց արագ-արագ վեր ու վար
անել սենյակի չերկարութեամբ. քիչ հետո նա կանգ
առաւ, բաց արեց գրութիւնը և սկսեց կարդալ. չոթե-
րորդ անգամ աշխատանքի բորսայի բլանկի վրա, մե-
քենայով տպած տողերը կրկնեցին.

«Յինքեմնի վարիչից.

Համաձայն ձեր Ա-պահանջի, գործավարութեան
համար ուղարկում եմք ընկեր վաւերացման:

Կարդալուց հետո Արեւյանը ժպտաց քթի տակ և
շարունակեց արագ-արագ քայլել սենյակի չերկարու-
թեամբ:



Գիշերը սահում է դանդաղ, գիշերը չի լուսանում. ծեր գններալը վաղուց արդեն քուն է մտել, փողոցներում լերթեկոթյունը դադարել է արդեն, սակայն Արելյանն անկողնի մեջ պառկած դեռ շարունակում է մտածել:

Վաղը նա աշխատանքի պիտի գնա. ահա գրասենյակը, վորտեղ պիտի աշխատի ինքը, և գրասենյակը, վորի վրա կանոնավոր կերպով «գործ»-եր ու մատյաններ են դասավորված, նույնիսկ մեքենագրուհին, վոր գրամեքենայի առաջ նստած դուրեկան կերպով չխչխկացնում է ու մեկ-մեկ քաղցր ժպիտներ գցում իր վրա. ահա միջահասակ ու լուրջ դեմքով մի մարդ, վոր դուրս է գալիս դիմացի սենյակից, դա վարիչն է, վոր իրեն է մոտենում, ինքը ժպիտը դեմքին խոսում է նրա հետ, իսկ վարիչը փափուկ ու մեղմ տոնով կարգադրություններ է անում ու ցուցմունքներ է տալիս իրեն:

Այս բոլորի մասին մտածելը հաճելի չե Արելյանի համար, սակայն նա դժգոհ չի լինի, լեթե քուն գաչքերին, քնի, վոր առավոտը շուտ լուսանա:

III

Աշխատանքի առաջին որն Արելյանը լռությամբ ու շիկնելով կատարեց այն բոլորը, ինչ վոր պատվիրեցին իրեն, լերկորդ որը նա միջանի ծանոթներ ունեցավ, իսկ մի շաբաթ անց նա իրեն զգաց այնպես, ինչպես իրենց տանը և այդպես լերկու տմիս անցավ:

Այդ լերկու տմսվա մեջ նա ընտելացավ իր աշխատանքին և իր հետ աշխատող աշխատակիցներին.

սիրեց նրանց և սիրվեց նրանցից. խնդրեց՝ չմերժեցին, խորհուրդ տվեց՝ լսեցին, վսմանք ել առարկեցին, վսմանց ել ինքը լսեց, ինքը առարկեց:

Յերբ հանդիպեց նրանց փողոցում կամ հիմնարկութիւն մեջ, նրանցից վսմանք տարբեր օրամադրութեամբ բարեկեցին իրեն. մեկը՝ հարգանքով, մյուսը՝ անտարբերութեամբ, չերոտրդը՝ ընկերաբար և ալդպէս աստիճանաբար ճանաչեց Աբելյանն իր հետ աշխատող ընկերներին:

Յերբ վարիչը, կամ նրա ոգնականը, վորեւ աշխատանք պատվիրեցին նրան, նա շտապ կերպով կատարեց ալդ պատվերը և ժպիտը դեմքին ներկայացրեց նրանց ու նալեց դեմքերին. չեղավ, վոր մի անգամ ժպիտով պատասխանեցին նրան, մի անգամ՝ խոժու դեմքով, չերեմն ել ուրիշի հետ խոսակցութեամբ դրադված լինելով՝ անտես առան նրա գոյութիւնը:

Շատ անգամ նա առավոտյան վորոշված ժամից տվելի վաղ չեկավ աշխատանքի և ուշ գնաց աշխատանքից. մարդիկ չեղան՝ նկատեցին ալդ, մարդիկ չեղան՝ խորհուրդ տվին խնայել իրեն, մարդիկ ել չեղան՝ դոհ մնացին. և այս բոլորից մի կարծիք հյուսվեց նրա մասին, տարբեր մարդկանց մեջ առանձին, բայց բոլորի մեջ ել միատեսակ:

Ալդպէս անցավ Աբելյանի աշխատանքի չերկուամիսը:

Կարողուովի բնակարանից մի ամիս առաջ հեռացավ Աբելյանը և այժմ փոքրիկ մի սենյակ ունի նա, փայտե մի թախտ, մի սեղան և միքանի մանրմունք իրեր, վորոնց գրեթե մեծ մասը տանտիրուհին եր տվել՝ գործածելու համար. նա վճարել եր նաե իջե-

վանի տիրոջ պարտքը և վերցրել նրանից իր տեղա-
շորը: Վերջին ամսվա տշխատավարձն ստանալուց հետո
նա հնարավորութիւն ունեցավ մի ձեռք համեստ հա-
գուսա գնել իր համար. այս հանգամանքն զգալի չափով
բարձրացրեց Արեւյանի տրամադրութիւնը. յեթե մինչ
այդ շատ անգամ ամաչում եր նա իր կարկատաններով
զարգարված հագուստներով լինել հասարակական վայ-
րերում, այժմ Արեւյանի համար վերացել է այդ ար-
գելքը և նա հաճախ, յերեկոյան, ընկերների հետ միա-
սին ակումբ ե գնում, ուր ժամերը հաճելի չեն անց-
նում նրա համար, ուր ընկերները նրան նոր ըն-
կերների և ընկերուհիների հետ են ծանոթացնում և
հետզհետե լայնանում է նրա ընկերական շրջանը: Այդ-
պես գնալով փոխվում էին Արեւյանի կյանքի պայ-
մանները, փոխվում եր և նա, վոր հետզհետե մոռա-
նում եր այն դառն օրերը, վոր նա ապրեց և աստի-
ճանաբար դառնում է կենսուրախ, համարձակ:

Մեկ-մեկ ել նա այցելում եր գեներալ Կարագու-
լովին, վորի տանը հինգ շաբաթ ապրեց նա. այդ հինգ
շաբաթվա ընթացքում նրանք վերահաստատել էին
նախկին բարեկամութիւնը և մտերմացել. այդ պատ-
ճառով ել ծեր գեներալը վերին աստիճանի սիրալիր
եր դեպի Արեւյանը և դժգոհում եր, վոր նա հաճախ չի
լինում իր մոտ:

Մի յերեկո Արեւյանն ակումբից դուրս յեկավ մի
աղջկա հետ. տգեղ չեր այդ աղջիկը, վոչ ել գեղեցիկ.
Նրա ցորենգուլն թուխ դեմքի վրա մշտական մի
ժպիտ եր փայլում, ծիծաղը դուրեկան եր ու վա-
րակիչ, աչքերը խորունկ էին, դուրեկան արտահայ-
տութիւնով:

Ինկտեմբերի սառը քամին վզդում եր փողոցներում, պաշտոն չերկնակամարից պսպղուն աստղեր հլին ժպտում նրանց դեմ, և լուսնի լրիվ սկավառակը հանդիսավոր ու խաղաղ փայլով ճառագայթներ եր փռում նրանց և քաղաքի վրա:

Նրանք չերկուսն հլ լուռ հլին և մտախոհ, չերկուսի չհլ քալերը դանդաղ հլին, դեմքերը թախծոտ:

— Եհ, Շուշիկ, վոքքան կուղելի ձուռն դար, ձուռն՝ առատ ու հորդ փաթիլներով և չես մինչև ուշ գիշեր թափառելի աչդ ձուռնի տարափի տակ... Լավ ե, չերը մարդ խորանում ե ինքն իր մեջ. չերը անձնատուր ե լինում իր մտքերին և զգացմունքներին, իսկ ձուռնը թափվում ե առատ ու հորդ փաթիլներով... — մեղմ տոնով խոսում եր Արեւյանը:

— Դու շատ զգայուն մարդ ես չերեում, Վահրամ, ի՞նչ ե պատահել քեզ հետ, — սուր հայացքն Արեւյանին ուղղելով դիմեց Շուշիկը:

— Զգիտեմ, գուցե և ալդպես ե...

— Կամ դու մի մեծ վիշտ ունես, կամ ել...

— Կամ ել ի՞նչ...

— Յերևի սիրահարված ես, — թուլ կերպով ժրպատաց Շուշիկը ու նայեց Արեւյանի աչքերին:

Արեւյանը լռեց:

Առաջին անգամը չեր, վոր հանդիպում եր աչդ աղջկան, արդեն չերկու շարաթվա ծանոթներ են նրանք, սակալն չերբեք անպիսի բուռն կերպով նրա սիրտը չեր փոթորկվել աչդ աղջկա հանդեպ, ինչպես աչդ իրիկուն:

Մտքերով ծանրաբեռնված նրանք հասել հլին փողոցի անկյունը, վորտեղ նրանք պետք ե բաժան-

վելին, վորտեղից արդեն Արեւլանը մենակ պիտք է դնար տուն:

— Յտեսություն, Վահրամ,—լսվեց Շուշիկի ձայնը: Արեւլանն սթափվեց:

— Գնանք, յես կուզեկցեմ քեզ. մի բան, վոր թափառելու անզուսպ ցանկություն ունեմ այս յերեկո...

— Զուր մի գա, Վահրամ, ցուրտ է, յես մենակ կգնամ,—ընդդիմացավ Շուշիկը:

— Յես չեմ մրսում, գնանք:

Շուշիկն ալլես չառարկեց և շարունակեցին ճանապարհը:

Արեւլանը մտածում եր ինչվոր բան ասել նրան, բայց չեր կարողանում վորոշել, թե ինչպես սկսեր իր ասելիքը:

Մի քանի րոպե հետո Շուշիկը կանգ առավ իրենց տան դռների առաջ և ձեռքն Արեւլանին մեկնելով ցտեսություն ասաց նրան: Արեւլանը սեղմեց այդ ձեռքը ու բաժանվեցին:

Դատարկ փողոցների ամալության մեջ հնչեցին քաղաքային ժամացույցի տասներկու հարվածները, սակայն Արեւլանը չլսեց այդ հարվածների ձայնը. նա դանդաղ քայլերով, ինքն իր մեջ խորացած, քայլում եր դեպի տուն:

Հաջորդ առավոտ Արեւլանը, գրասենյակ մտնելուց առաջ, շենքի դռան վրա հետեյալ հայտարարությունը կարդաց.

Նոյեկեթվի բոլոր անգամներն այսօր, յերեկոյան ժամի 7-ին, հավաքվելու յեմ լուսբաժնի գահլիճում լսելու Խորաճի միության բարեօղարի զեկուցումը, կնժված հավաքակաճ պայմանագրի մասին»:

Կարգալուց հետո մի վարկւան կանգ առավ Արեւլանն ու մտածեց. այդ մի վարկւանում նա և տխրեց, և՛ ուրախութեան մի ժպիտ փալկեց նրա դեմքի վրա. տխրեց, վորովհետեւ զրկվեց նա այդ որը Շուշիկին հանդիպելու հնարավորութիւնից, ուրախացավ, վորովհետեւ այդպիսի ժողովներից Արեւլանն սպասելիքներ ուներ. ուստի՝ նա առանց վարանելու վճռեց անպայման ներկա լինել այդ ժողովին:

Յերբ Արեւլանը գրասենյակ մտավ, այնտեղ վոչ-վոք չկար. աշխուժ քլթքլթոցով վառվում եր վառարանը և առանձին տրամադրութիւն ստեղծում այնտեղ. Արեւլանն անմիջապէս բաց արեց իր թերթերն ու մատնաները և ընկղմվեց նրանց մեջ. սակայն Արեւլանի միտքը շատ հեռու չեր շրջում գրասենյակից. նա մտքով սլացել եր այնտեղ, տպարան, վորտեղ այժմ կապույտ գոգնոցը հագին, կասսայի առաջ կանգնած շարում և Շուշիկը. շարում և ու ժպտում քթի տակ. նրա կողքին և դեմուդեմ շարքերով կանգնած են կենսուրախ և ջահել գրաշարներ, վորոնք լուրաքանչլուր անդամ ձեռները կասսային մեկնելու հետ միասին՝ ժպտուն դեմքով նայում են Շուշիկին, ապա իրար չերեսի չեն նայում և աչքով անում իրար: Հանկարծ մի միտք կայծակի պէս ցնցեց Արեւլանին, մի համառ կասկած համակեց նրա ելութիւնը:

— Ո՛վ իմանա, գուցե այդ ջահել գրաշարների մեկը սիրում և նրան և Շուշիկն արդեն տվել և իր համաձայնութիւնը:

Այս միտքն զրադեցրեց Արեւլանին. նա միքանի բոպե գրիչը բարձրացրեց թղթի վրայից, աչքերը մի կետի հառեց ու շվարած մտածում եր:

— Այո, դա խելքից հեռու բան չի, — շնչաց հա
և գլուխը կախեց թղթերի վրա:

Քիչ հետո գրասենյակի աշխատակիցները բոլորը
գրավեցին իրենց տեղերը և սկսվեց գրասենյակային
նորմալ կյանքը: Վրա հասան որվա այն ժամերը, յերբ
ֆինբաժինը լիքն և լինում. միջանի հաշվապահների
սեղանների առաջ արդեն բավական թվով մարդիկ են
հավաքված, իսկ գրասենյակի ծայրում գտնվող «յելք»-ի
և «մուտք»-ի կասսաների առաջ մարդիկ հերթի յեն
կանգնել փող վճարելու, կամ ստանալու համար:

Աշխատանքը յեռում և տյնտեղ: Արելյանը մոռա-
ցել և իր թախիժը. մարդիկ շտապ-շտապ գալիս են,
գնում, խոսում, խնդրում կամ պահանջում և այդ ընդ-
հանուր յեռ ու դեռի մեջ ժամերն անցնում են արագ,
աննկատելի:

Գրասենյակի ժամացույցի յերեք հարվածները
հնչեցին. աշխատակիցներն արագ-արագ հավաքեցին
սեղանների վրա փոված թղթերն ու հաշվեմատականները
և իրար յետևից դուրս գնացին: Գրասենյակը դատարկ-
վեց. միայն Արելյանն եր, վոր դեռ նստած գրասեղա-
նի առաջ, շարունակում եր աշխատել և շուտ-շուտ
նայում եր միջանցքի դռան:

— Խնչ, դու դեռ այստեղ ես, արդեն ժամը 4-ն ե:

Արելյանը բարձրացրեց գլուխը, դա բաժնի վա-
րիչն եր, Մելիքլանը:

— Յես դեռ միքիչ ել պիտի աշխատեմ. դորժեր
կան կարգի բերելու, — ժպտալով ասաց Արելյանն ու
շարունակեց:

— Չե՛ր կարելի վաղվան թողնել:

— Լավ և եսոր վերջացնեմ. գուցե վաղը նոր
աշխատանք շատ լինի:

— Ե՛հ, լսով, դժուարեւ, — մեղմ տոնով ասաց վարիչն ու գնաց:

Նրա գնալուց հետո ինչ վոր աշխուժութիւնն ու լիւանդ իջավ Արեւլանի վրա. նրան թվաց, վոր մի վորեւե հաջող գեպք տեղի ունեցավ իր հետ. և այդ վայրկյանին բազմաթիւ ըաների մասին մտածեց Արեւլանը:

— Դե, դե, հերիք ե գրոտեցիր, վեր կաց, փափառ-փուռեղ քաշի, ավլեմ պտի, — դռնից ներս մտնելով հանաքի տոնով ասաց Արեթը:

Նա քստնութ տարեկանի մոտ շիկահեր մի լերիտաստրդ եր, բարձրահասակ, նիհար. գլխին ուներ սև մորթուց կարված հնամաշ մի գտակ, իսկ հագին խունացած մի շինել, վորի մի թեւ հագել եր, իսկ մյուսն առանց հագնելու գցել ուսին:

— Միքիչ ել գրեմ, Հարեթ ջան, նոր ինչ կուզես արա, — ուրախ տոնով ասաց Արեւլանը:

— Ախր մարդ իմանա թե եղ ինչ կգրեք սաղ որն, Է... եղքանել գրե՞լ եղնի...

— Հապա, Հարեթ ջան, վոր չգրենք, գործ գլուխ կզոմ...

— Արես վկա, ես սաղ գործկոմի մեջը վոչ քեզնեն թեղ գալող կա, վոչ քեզնեն ուշ երթցող, վոր քեղ հարուր մանեթ ել տան՝ քիչ ե:

— Մարդ վոր մի գործ հանձն ե առնում, Հարեթ ջան, պետք ե ենպես անի, վոր սեւերես չմնա. բա դու կարծում ես, վոր մարդ մեհակ փողի համար պիտի աշխատի՞...

— Ես մեռնի, դու ինչըն որ իսկական կուսաց-կական եղնիս, — ձեռքը աջ ալտին խփելով՝ ասաց Հարեթը:

— Իսկ դու կուսակցական չե՞ս, Հաբեթ:

— Հըբը չե՞, հլա դաշնակը ֆոս եր, վոր լես կուսացկության մեջ մտա:

— Լսվ՛ ես արիլ, Հաբեթ ջան, շատ լավ ես տրել.— ծխիր, ծխախոտ առաջարկեց նրան Արեւյանը:

— Ծխե՛նք,— ձայնը չերկարացնելով ասաց Հաբեթը և հաստ մատները ծխախոտի տուփը կոխեց:

— Դեհ, Հաբեթ ջան, լես վերջացրի,— թղթերը հավաքելով դիմեց Արեւյանը,— հիմա ինչ կուզես արա—ցը...

Արեւյանը գնաց:

— Ա՛յ քեզ աշխատող ու լավ տղամ, արես վկա, վահրամից լավ տղա չկա ես սաղ գործկումի մեջը,— մտածում եր Հաբեթը ու քստքստացնելով մաքրում գրասենյակը:

Յերբ Արեւյանը միջանցքից դեպի փողոցի դուռն եր քալում, լսում եր Հաբեթի ուրախ չերգի ձայնը.

«Ուր գընացիր, ուր չեկանք,

չերի չերի յանդը՛մ ո՛չ ո՛չ...

Դու իմ սրտին դուր եկանք,

յանդը՛մ շե՛կո ջան...

*
* *

Լուսբաժնի դահլիճում խորհրդային աշխատավորների միության ժողովը ձգձգվում և տեղերից լավող բացականչություններն ու փսփսուկները, միության քարտուղարի ղեկուցումից հետո, բարձրաձայն խոսակցությունների լեն վերածվում և աղմուկով լցնում դահլիճը:

Ջղպնացած նախագահի զանգահարությունն ան-

հետեանք և մնում. դեպի նախազահական սեղանը նետվող դրամներ հարցերը շարունակվում են. հարցեր, վորոնք բոլորն ել վերաբերում են հավաքական պայմանագրին և վորոնց պատրաստվում և պատասխանել գեկուցողը:

Պարտուղարի պատասխանից հետո սկսվում և մաքերի փոխանակութունը. արտահայտվողներից վորմանք իրենց զգոհութունն են արտահայտում տարիֆային ալդ նոր պայմանագրի մասին:

— Կյանքը հարյուր տոկոսով թանկացել և, իսկ աշխատավարձը, համաձայն կնքված պայմանագրի, ավելացել և քսանհինգ տոկոսով միայն,— ասում և ջնտւմեն մի ճարտարագետ:

— Յեղբայր, դոնե այնքան աշխատավարձ տվեք, վոր ապրելու հնարավորութուն ունենանք,— ասում և մի ուրիշը:

— Մի ամսվա աշխատավարձով հնարավոր չե նույնիսկ մի գույգ տուֆլի գնել,— շնչարգելութամբ ու շիկնելով վերջացնում և խոսքը շուրթերը ներկած մի մեքենագրուհի:

Արելյանը նստած եր մեջտեղի նստարաններից մեկի վրա. նրանից մի նստարան հեռու իրար կողքի նստած ելին Ֆինրաժնի ու տեղատնտեսության բաժնի վարիչները:

Արելյանը պարզ կերպով լսում եր նրանց կամացուկ խոսակցութունը:

— Յեղբայր, չեն հասկանում այս մարդիկ, վոր հնարավոր չե ավելին. չեն հասկանում, վոր դրանից ավելի վճարելը պետութւան ուժերից վեր և,— խոսում եր Ֆինրաժնի վարիչը:

— Յաջիւ աչն ե, վոր չեն ըմբռնում, վոր պետութիւնն աշխատավարձ վճարելուց բացի՝ հազար ու մի միջոցներով բարեկամում ե հենց իրենց կյանքը. դպրոցներ ու հիվանդանոցներ ե պահում, շենքեր ե կառուցում. միթե՞ այս բոլորն իրենց չեն վերաբերում, միթե՞ իրենց յերեխաները չեն, վոր սովորում են դըպրոցներում:

— Խոսքը ձերն ե, ընկ. Արեւյան, — դիմեց նախագահը: Բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի Արեւյանը: Նա բարձրացավ տեղից ու վստահ քայլերով դիմեց դեպի նախագահական սեղանը. ժողովականների ուշադրութիւնը կենտրոնացավ. գուցե նրանից եր, վոր արտահայտվողներից առաջինն Արեւյանն եր, վոր տեղից չխոսեց. նախագահական սեղանի մոտ կանգնած, նա մի պահ լռութիւնից հետո սկսեց.

— Ընկերներ, մի շարք մարդկանց կողմից տըրտունջն ու բողոքը հիվանդութիւն ե դարձել. դժգոհում են՝ առանց հաշվի առնելու մեր պայմանները, առանց հաշվի առնելու այն, թե արդյոք մեր յերկրի տնտեսական այս սուղ պայմաններում հնարավորութիւն ունի՞ մեր պետութիւնն ավելի աշխատավարձ տալու, թե վոչ: Աղքատ մի յերկիր ունենք, հնուց մնացած ավերակների մի կույտ, վորտեղ դեռևս տընտեսութիւնն աննշան բարձրութեան վրա չե գտնվում, վորտեղ կառավարութիւնը ջանք ու ճիգ չի խնայում կյանքը նորմալ պայմանների մեջ դնելու: Այստեղ ընկերները հաշվի չեն առնում միայն այն, ինչ վոր ստանում են իրրե աշխատավարձ: Իսկ այն, ինչ վոր ծախսվում ե իրենց յերեխաների և իրենց բարեկեցութեան վրա, մոռացութեան են տալիս: Յեւ ջանք այն

և, վոր բողոքում են նրանք, ովքեր համեմատաբար ավելի լավ պայմաններում են գտնվում և լավ նորմաներով վարձատրվում. մի ճարտարապետ, մի գլխավոր հաշվապահ բողոքում են, վոր իրենց աշխատավարձը քսանհինգ տոկոսով է միայն ավելացել և հաշվի չեն առնում, վոր տեխնիկական աշխատակիցների աշխատավարձը բարձրացել է քառասուն տոկոսով. տեխնիկական աշխատակիցների, վորոնք առավոտից մինչև լերկո կեղտի ու փոշու մեջ են. ցրիչների, վորոնք ամբողջ որը դեռ ու դեն են վաղվղում: Այստեղ մարդիկ ել չեղան, վոր չեղրակացրին՝ թե մի ամսվա աշխատավարձով մի զուլգ տուֆի չել չի գնվի. ճիշտ է, բայց միթե՞ մեր կառավարութլունը հնարավորութլուն ունի՝ ալնքան աշխատավարձ վճարելու լուրաքանչլուրիս, վոր մեղանից ամեն մեկը հնարավորութլուն ունենա իր ցանկացած արժեքի ու մոգայի տուֆլիներն ու հագուստները գնել. մեր աշխատակիցներն իրենց ստացած աշխատավարձով ավել կամ պակաս չափով կարողանում են իրենց ընտանիքների կարիքները հոգալ. պետք է համբերող լինել, պետք է զգալ, հասկանալ յերկրի տնտեսական դրութլունն ու ապա պահանջներ անել:

Արելյանը վերջացրեց իր ասելիքը և քալեց դեպի իր տեղը. դահլիճի ալս ու ալն կողմից ծափահարութլունների ձայներ լսվեցին:

— Արեւ վկա, համա լավ տվիր հմ... — ժպիտով շշնջաց Հարեթը, յերբ Արելյանն անցնում էր նրա մոտով և յերբ Արելյանն ուզում էր նստել, նա ժըպտուն հայացքն ուղղեց դեպի ալն նստարանը, վորտեղ նստած ելին յերկու վարիչները. վարժ աչքն ալդ հա-

յացքի մեջ կարող եր կարդալ «Ճիշտ արտահայտեցի,
արդյոք, ձեր կարծիքը»:

Դահլիճում աղմուկ բարձրացավ. ճարտարապե-
տը հուզված կերպով ձայն եր ուղղում. շուրթերը ներ-
կած մեքենագրունին կարծես փոշմանել եր իր ասած-
ների համար և աշխատում եր համոզել կողքի նստա-
ծին, վոր սխալ հասկացավ Արեւյանն իր ասածը:
Դահլիճը շարունակում ե աղմկել. նախագահը նյար-
դային կերպով զանգահարում ե, իսկ Հաբեթն այդ
ընդհանուր աղմուկի մեջ քահ-քահ ծիծաղում եր ու
նայում Արեւյանին:

Հետագա խոսողներից շատերը հավանութուն
տվեցին Արեւյանի ասածին և ի վերջո ժողովը ձայնե-
րի մեծամասնությամբ հավանութուն տվեց կնքված
պայմանագրին:

Այդ գիշերվա ժողովում, նրանց մեջ, ովքեր ա-
ռաջին անգամն ելին տեսնում Արեւյանին, մի կար-
ծիք հշուսվեց նրա մասին, իսկ նրանք, ովքեր արդեն
ուռնելին այդ կարծիքը՝ համոզվեցին, վոր իրենք չեն
սխալվել:

IV

Զյունը թափվում ե առատորեն, թուխալը ծան-
րորեն նստել ե քաղաքի վրա, վորի մեջ այնքան ա-
ղոտ են չերևում քաղաքի ելեկտրական լուսերը:

Արեւյանը հանդարտ ու մտածկոտ քայլերով գի-
մում ե դեպի ակումբ. արդեն չերրորդ ուրն ե, վոր նա
չի հանդիպել Շուշիկին, ձանձրույթն ու կասկածը
պատել են նրան, սիրտը տրաքվում ե կարծես, ամեն
ինչ դատարկ ե թվում, ամեն ինչ իդուր, անիմաստ:

Վերջին որերը նա սկսել էր կարդալ. կարդում էր քաղաքական և պրոֆեսիոնալ գրքեր. սակայն ալս չերեք որ ե նա դադարեցրել և այդ զբաղմունքը, նա չի կարողանում կենտրոնանալ. ինչ-վոր անհանդիստ դուլթյուն և ապրում նա, ինչ-վոր անորոշութուն մղձավանջի պես նստել և նրա ուղեղի ու սրտի վրա...

— Իսկ չեթե այսօր ել չերեա նա...—մտածեց Արեւյանը,—բայց ինչ կարող և պատահած լինել նրան. չե՞ վոր նա հաճախ էր լինում ակումբում...

Փափուկ ձյունը ճոճուում և նրա վտռների տակ, ուրախ զրնդոցով նրա առաջից իրար լետեից սահում են սահնակները, այնքան հաճելիորեն, այնքան դուրեկան:

Մի սահնակ զնդալով անցավ փողոցի մեջտեղով. նրա մեջ նստած ելին մի չերիտասարդ և գեղեցիկ մի տղջիկ. աղջիկը ծիծաղում էր ուրախ կնկչոցով, իսկ չերիտասարդը շոյում էր նրա ձեռքը: Արեւյանին թեև դուր չեկավ այդ, սակայն ինքն ել չհասկացավ, թե ինչու աչքան խոր ատելութուն զգաց դեպի այդ զույգը:

Քիչ հետո Արեւյանն արդեն ակումբումն էր, սակայն ակումբի վոչ մի սենյակում չգտավ Շուշիկին:

— Գուցե դեռ կգա,—մտածեց նա ու նստեց ընդհանուր սենյակի աթոռներից մեկի վրա. նրա դեմքը մոռլ էր, շուտ-շուտ ծխում էր նա ու նայում միջանցքի դռան. ամեն անգամ միջանցքի դուռը բացվելիս Արեւյանը հայացքը դեպի դուռն էր թեքում, սակայն իզուր. բոպենները դանդաղ ելին սահում, բոպենները տարվա պես ծանր ելին թվում նրան:

Հանկարծ յահլիճի դուռը բացվեց ու կանացի

աղմուկով լցվեց ընդհանուր սենյակը։ Արեւլանը հա-
յացքը դեպի դուռը դարձրեց, նրա աչքերը փայլեցին,
դեմքի թախիծը վայրկենապես ցրվեց ու ակամա
բարձրացավ տեղից։ Մի խումբ կանանցով շրջապատ-
ված՝ Շուշիկը դուրս չեկավ դահլիճից։

Արեւլանը պահ մի վարանեց. չգիտեր մոտենա՞ր,
թե սպասեր։

Շուշիկը վողկորված կերպով խոսում էր կանանց
հետ.

— Ուրեմն եղպես, վաղը չե մյուս օրն ելի նույն
ժամին կհավաքվենք հստեղ,— վերջացրեց Շուշիկն ու
քայլերն ուղղեց դեպի հանգստի սենյակը։ Արեւլանը
հետևեց նրան և հանգստի սենյակում բազմոցներից
մեկի վրա նստած գտավ նրան։ Արեւլանը մոտեցավ,
բարեկցեց ու նստեց միևնույն բազմոցին։

— Յերեւի նոր չեկար տնից, աչո՛,— դիմեց Ա-
րեւլանը։

— Վհչ, պարապում եյի ախտեղ բանվորուհիներ
ի հետ։

— Պարապում եյի՞ր... ի՞նչ եյիր պարապում։

— Գրագիտություն եմ սովորեցնում մի խումբ
բանվորուհիների։

— Ահա... իսկ ռւր եյիր այս քանի օրը, չեյիր
չերեում։

— Տանն եյի, գործ ունեյի, ժամանակ չեւ լի-
նում աւումբ գալու։

Քիչ հետո նրանք չերկուսն ել լռեցին։ Արեւլանը
ծխում էր։ Նորից մի խորը թախիծ իջավ նրա աչքե-
րին և նա թաղվեց խորը մտքերի մեջ։ Շուշիկը կար-
ծեա ազդվել էր Արեւլանի թախծոտ տրամադրություն-

նից, նրա սե ու խոշոր աչքերն ինչ-վոր դուրեկան
արտահայտութուն ելին ստացել: Մեկ-մեկ նրանց
հալացքները հանդիպում ելին իրար, հալացքներ, վո-
րոնք այնքան արտահայտիչ ելին, այնքան խորազն-
նին, և կարծես նրանցից լուրաքանչլուրն ուզում էր
մի հալացքով կարդալ մյուսի հոգու գաղտնիքները,
հասկանալ նրա ելութլունը:

Արդեն բավական ուշ էր, չերբ Արեւլանն ու
Շուշիկը դուրս լեկան ակումբից:

Ջլունը գաղարել էր. փողոցները դատարկ ելին.
մեկ-մեկ մարդիկ ելին անցնում փողոցով, մեկ-մեկ
կառքեր կամ սահնակներ ելին զնգալով սլանում ձյու-
նածածկ փողոցների միջով:

Արեւլանն ու Շուշիկը քալում ելին, նրանց վոտ-
ների տակ ճռճռում էր ձյունը, նրանց վոտների տակ
կարծես արտնջում էր նա:

Ահա նրանք թեքվեցին դեպի այն փողոցը, վո-
տեղ ապրում և Շուշիկը: Դատարկ փողոցում ելեկտրա-
կան մի լամպ էր վառվում միայն: Արեւլանը կանգ
առավ. Շուշիկը դարմացած դարձավ դեպի Արեւլանը.

— Ինչո՞ւ կանգնեցիր, Վահրամ, — դողալով հարց-
րեց Շուշիկը:

— Վոչինչ, չես ուզում եմ, վոր այս չերեկոն հա-
վերժանա իմ և քո հոգու մեջ, — չերերուն ձայնով
շշնջաց Արեւլանը:

Շուշիկը շփոթված նայում էր նրան ու սպասում
էր, թե ինչ պետք և ասի Արեւլանը:

— Դու հասկացար ինչ ելի ուզում ասել չես:

Շուշիկը չպատասխանեց:

Յես ուզում եմ ասել, վոր ցանկանում եմ

միշտ քեզ հետ լինելի և սիրելի քեզ, — այս ասելով Արեւյանը դրկեց Շուշիկի գլուխը:

— Ի՞նչ ես անում, Վահրամ, հո չե՞ս դժվել... — դողալով շնչաց Շուշիկը: Վերջին բառերը խեղդվեցին Արեւյանի շրթունքների արանքում: Նրանք չերկունս ել ալլալված ելին:

— Դեռ վոչ վոք ինձ հետ աղպես չեր վարվել, — տխուր շեշտով շնչաց Շուշիկը ու դանդաղ քայլերով առաջ շարժվեց:

Արեւյանը լուռ էր:

— Չգիտեմ ինչպես վորակեմ քո արարքը, Վահրամ, — նույն տոնով շարունակում էր նա:

— Դու համաձայն չե՞ս ինձ հետ ամուսնանալուն, — շփոթված դիմեց Արեւյանը:

— Ո՛ւՖ, չգիտեմ, գլուխս չի գործում, մի խոսիր այդ մասին, — կարծես կատարվածը հիշելով նյարդալին կերպով պատասխանեց Շուշիկը:

Քիչ հետո նրանք կանգնած ելին Շուշիկենց տան դռան, և չեր Արեւյանը պատրաստվում էր բաժանվել նրանից, ձեռքը նրան մեկնելու հետ միասին շնչաց:

— Ուրեմն դու վոչինչ չասացիր:

Շուշիկը չպատասխանեց:

Յեւ չեր Արեւյանը «բարի գիշեր» մաղթեց ու հեռացավ, Շուշիկը պահ մի կանգնեց դռանը, նայեց Արեւյանի յետևից, ապա բաց արավ բակի դուռը և հաճաքում ու մտածկոտ քայլերով դիմեց դեպի տուն:

Արեւյանը շարունակում էր իր ճանապարհը. նրա սև ստվերը չերկարորեն փռվել էր փափուկ ու անարատ ձյունի շերտի վրա, վորը պապղում էր ամպի տակից բարձրացող լուսնի փայլուն ճառագայթներին հերքո:

Որերն անցնում են իրար լեռներից, որեր, վորոնք դառնությամբ ու թախիծով են անցնում Արեւլանի համար: Այն դիշերվանից հետո Արեւլանը թեև միքանի անգամ հանդիպել էր Շուշիկին, թեև սրտառուչ ու լավ խոսքեր եր տակ նրան, սակայն վորոշակի վոչ մի բառ չէր լսել նրանից. միակ հուլիսը՝ այդ այն էր, վոր լերեկ Շուշիկը խոստացել էր «վաղը պատասխանել» իրեն, իսկ այժմ, լերը ամենքը տոնական տրամադրությամբ թատրոն կամ կինո լին գնում, լերը աշխուժ չեռուղեւ կա քաղաքում, ինքը վերադառնում է ակումբից, առանց Շուշիկին հանդիպելու, առանց նրանից պատասխան ստանալու, պատասխան, վորը ժամ առաջ ստանալու համար Արեւլանն ամբողջ որը տուն չի գնացել: Իսկ այժմ նա քալերն ուղղում է դեպի Կարագուլովի բնակարանը, վորպեսզի տրամուլթյունը մոռանա, թախիծը ցրվի:

Յեւ ահա Արեւլանը բաղխում է Կարագուլովի սենյակի դուռը:

— Ո՞վ ե, — ներսից լսվում է Կարագուլովի ձայնը:

— Յեւ եմ, գեներալ, Վահրամը, — դրսից շշնջում է Արեւլանը:

— Ա՛, վերջապես լեկար... — ուրախ տրոնով խոսում է Կարագուլովը ու բանալին պտտացնում դռան վրա: Սենյակի դուռը բացվելուն պես Կարագուլովի դեմքին ուրախ մի ժպիտ է փայլում, Արեւլանի դեմքին՝ զարմանք: Տեսարանը, վոր բացվեց Արեւլանի առաջ, տարրորինակ էր:

Կարագուլովը հաղել էր իր հին ղինվորական

պգեստները, կրծքին ամրացրել իր ստացած բոլոր շքանշանները և աշխատում եր զինվորականի պատշաճ շարժ ու ձևերը պահպանել որինական կերպով:

— Տեսնում ես, ձանձրուլթա ու մենակուլթունս փարատելու համար ինչ եմ արել, — սկսեց Կարապուլովը, չերբ արդեն նրանք նստել ելին իրար դեմ, — ախոր հագնվել եմ նախկին նոր տարիների պես. քանի՜ ժամանակ ե պահել եմ սրանք սնդուկում և մտածել եմ, վոր մի որ պետք կգան, — հագուստները ցույց տալով շարունակեց նա, — եխ, ափսոս անցած որեր...

— Լավ ես արել, գեներալ, հուշող մի կտրիր, ավատացած չեղիր, վոր այդ որերն ելի կգան, — պատասխանեց Արեկյանը և վերցրեց սեղանի վրա ընկած Կարապուլովի նկարը:

— Ի՞նչ առաջ նայում ելի այդ նկարին, նայում ելի հայելուն. մտածեցի տեսնեմ ի՞նչ փոփոխութուն և կատարվել ինձ հետ. նայեցի և տեսա, վոր ել առաջվա մարդը չեմ, Վահրամ, ժւր ե հիմի եդ մարդը, չկա...

Կարապուլովն անհուշս կերպով թափահարեց գլուխը. թափահարեց ու կարծես հիշողութունների մեջ ընկած, աչքերը մի կետի հառած միքանի բոպե մնաց այդպես:

— Իսկ ի՞նչ կա դրսում, ի՞նչ են խոսում, — լուր-թյունը խզելով՝ դիմեց Կարապուլովը:

— Առանձնապես բան չեմ լսել, սակայն աջ ու ձախ դժգոհում են և դժվար թե այդ դժգոհութուններն անհետևանք մնան, — շշմաց Արեկյանն ու նայեց պատահաններին:

— Տեսնենք, տեսնենք, ժւր եր մի լույս բացվեր...

Մինչև ուշ գիշեր Արեկյանը Կարապուլովի տանն

եր, Կարագուլովը պատմում եր վերջին պատերազմի ժամանակ ճակատում կատարած իր քաջագործութիւնները մասին, կապելով այդ պատմութիւնները կրօնին ամրացրած շքանշանների հետ և բացատրելով, թե դրանցից վորը վորտեղ, վոր իշխանը կամ փոխարքան և իր ձեռքով կախել իր կրօնին և ամեն մեկի հետ ինչ խոսքեր են ուղղել իրեն և ինքն ինչ և պատասխանել:

Կարագուլովը վոգեորոված եր.

— Իսկ հիմա, կարծես ձեռ ու վոտս կապած լինի. ընկել եմ չորս պատի արանք ու դառն որեր եմ անցկացնում. եհ, չմեռնելի, մի վերջին անգամ ել դուրս գալի գինվորական ցուլցի, մի վերջին անգամ ել, ու նրանից հետո ինչ կուզես լինի,—հառաչելով վերջացրեց Կարագուլովը:

— Հավատո՛ւ, գեներալ, վոր կարժանանաս եդ որվան,—վստահ տոնով պատասխանեց Արեւյանը:

— Եհ, Վահրամ, Ելլաս ել միշտ քեզ պես եսում, բայց...

— Դու այդ կտեսնես,—ասաց Արեւյանն ու վեր կացավ տեղից:

Ուշ եր արդեն, չերբ Արեւյանը դուրս չեկավ Կարագուլովի բնակարանից և քալերն ուղղեց դեպի տուն. փողոցները թեև դատարկ էին, սակայն Արեւյանը շուտ-շուտ չետ եր նայում. նրան թվում ե, թե ինչ-վոր քալերի ձագն և լսում, ինչ-վոր մեկը հետեւում ե իրեն և յերբ նա թեքվեց դեպի իր բնակարանը տանող փողոցը, Արեւյանը նկատեց, վոր մեկն ասոք քալելով գալիս և իր չետեից:

— Ո՞վ կլինի արդոք, — մտածեց նա ու քալերն

արագացրեց: Անցորդը հասավ Արեւլանին, կասկածա-
վոր հայացքով Արեւլանը լուսի տակ զննեց մոտեցող
մարդուն ու հանգստացավ:

— Դա խանութպան Համոն եւ Դրանից ինչ
վտանգ կարող ե լինել,— ինքն իրան շշնջաց նա ու
բակի դռնից ներս մտավ:

Սենյակ մտնելուն պես ինչ-վոր թուղթ շրջաց
Արեւլանի վտտների տակ: Արեւլանը լուսը վառեց,
դռների մոտ մի նամակ եր ընկած. արագ շարժումով
վերցրեց, բաց արավ ծրարը, սիրտն արագ կերպով
բարախել սկսեց ու սկսեց հեալով կարդալ նամակը.

«Վաերամ.

Խոստմանս համաձայն պատասխանում եմ. ամ-
բողջ մի շաբաթ մտածելուց հետո յես վորոհեցի
պարզ կերպով ասել քեզ այն բոլորը, ինչ վոր ինձ
մտահոգություն ե պատճառում. յես կհամաձայնեմ
ամուսնանալ քեզ հետ այն դեպքում, յերե գու գեմ
յես լինի, վոր մեր ամուսնությունից հետո յել
կարողանամ իմ աշխատանքով կերակրել իմ պա-
ռավ մորը յեմ կատարել իմ հասարակական պար-
տականությունները. իսկ ինչ վերաբերում ե քեզ,
յես հավատացած եմ, վոր գու ինձ յես խաբի...

Շուշիկ»:

Արեւլանի աչքերը փայլում էին, նրա սիրտն
արագ կերպով բարախում եր: Արեւլանը մինչև ուշ
գիշեր մտածում եր այդ նամակի և Շուշիկի մասին:

VI

Այդ դեպքից միքանի շաբաթ հետո Արեւլանն ու
Շուշիկն ամուսնացան:

Յեկ տոաջին զգացումը, վոր գրեթե միաժամանակ արթնացավ չերկուտի մեջ ել ամուսնութլուենից հետո, ալդ աչն եր, վոր նրանք անհետ կորցրին ինչ վոր բան, վոր իրենց հոժար կամքով ինչ-վոր լուծ վերցրին իրենց ուսերի վրա և բազմաթիվ թիկերով կապվեցին իրար հետ. սակաչն ալդ զգացումը նրանցից վոչ մեկը չարտահայտեց, իսկ հետո նրանք արդեն ընտելացան ալդ լուծին, հաշտվեցին իրենց դրութւան հետ և գոհ ելին իրենց կյանքից:

Ամուսնանալուց հետո կանոնավորվել եր Արեւլանի կյանքը. ալժմ նրա համար տանը մնալ ու պարապելն ավելի հաճելի չեր, քան ակումը կամ վորեւե տեղ գնալը. ալդ պատճառով ել շատ հաճախ Արեւլանն իր ազատ ժամերն ոգնտագործում եր ընթերցանութլամը, կարգում եր մինչև ուշ գիշեր և չերը հոգնում եր ընթերցանութլունից, սկսում եր կատակներ անել կամ ընտանեկան առորչա խնդիրների մասին խոսել Շուշիկի հետ:

Շուշիկը գասավորել եր իր ժամերը. ամեն որ աշխատանքից գալուց ու ճաշիլուց հետո, նա հաջորդ որվա համար ճաշ եր պատրաստում, տնալին գործերը կարգավորում. բացի ալդ նա մեկ-մեկ ել ակումը եր գնում և պարտաճանաչ կերպով շարունակում եր պարապմունքը բանվորուհիների հետ և ամեն անգամ, չերը նա վերադառնում եր պարապմունքից, վոգևորված կերպով պատմում եր Արեւլանին իր հաջողութւան մասին, պատմում եր, թե ինչպես հաջող և գնում աշխատանքը, թե ինչպես հետգհետե կարողանում են կարգալ ու գրել բանվորուհիները չերբեմն-չերբեմն ել նա բաց եր անում իր հետ բերած տետրակները և ցուլց տալիս Արեւլա-

նին: Այդ բոլորը թեև անքան ել հետաքրքրական չեն Արեւլանին, սակայն Շուշիկի սիրտը չկոտրելու համար ուշադիր կերպով լսում են նա ու քաջալերում նրան:

Դեռ ամուսնանալուց առաջ Արեւլանը մասնակցում էր գործկոմի կուս.-բջիջի դռնբաց նիստերին: Կուս. բջիջի գրեթե բոլոր անդամները ճանաչում էին նրան, վորպես կարգացած և քաղաքականապես պատրաստված տղայի, այդ պատճառով ել շատերը խրախուսում էին նրա կուս.-շարքերն անցնելու ցանկությունը, չէր Արեւլանը նրանցից լուրաքանչլուրի կարծիքն էր ուզում իմանալ այդ մասին:

Շուշիկը գոհ էր Արեւլանի այդ մտքից և հավատացնում ու համոզում էր նրան, վոր անպայման կընդունվի:

— Ինչպես դու լես ասում, հայրդ բանվոր ե չեղել, ինքդ ել նվիրված աշխատող ես, ել ի՞նչ արգելք կա քո ընդունվելուն, — համոզված թոնով ասում էր Շուշիկն ու քաջալերում, չէր խոսք էր բացվում այդ առթիվ:

Առաջին անգամ այդ մասին Կարագուլովն էր հիշեցրել Արեւլանին իր խրատների մեջ:

— Հապա նայիր շուրջդ, — ասում էր նա. մի տես, թե ովքեր են բոլոր լավ պաշտոնների գլուխը կանգնած, տես և խելքդ գլուխդ հավաքիր, ոգտագործիր ամեն առիթ լավ ապրելու համար:

Յեւ Արեւլանը ճիշտ էր գտնում Կարագուլովի ասածները, ամեն կերպ աշխատում էր ուշադրություն գրավել իր վրա, այնպես անել, վոր ծանոթների շրջանում լավ կարծիք ստեղծվեր իր մասին և այդ հաջողվում էր նրան:

Յեզ անա դրասենյակում նստած ուրախ տրամադրությամբ աշխատում եր Արեւլանը. ինչ-վոր մի աշխուժութիւնն եր իջել նրա վրա, գուցե այդ նրանից ե, վոր դրասենյակէն այդ առավոտ սովորականից ավելի տաք եր ու վառարանի մեջ քլթքլթում եր կրակը, տարածելով իր շուրջը հաճելի մի տրամադրութիւն:

Մեքենադրուհի Հասմիկը շուտ-շուտ նալում ե նրան ու չիկչիկացնում մեքենան, հաշվապահների մատների տակ հաշվեկոտիկ հատիկները կարծես առանձին թափով են չիկչիկում այդ առավոտ:

—Ե՛, Հասմիկ, ասում ես ոռճիկ պիտի ստանանք հո՛, — դարձաւ նրան Արեւլանը:

— Պիտի ստանանք, են ել վո՛նց, նոր տարիֆներով, — ուրախ տրամադրությամբ պատասխանեց Հասմիկը, — տեսնո՞ւմ ես, Վահրամ, ըստրն ուրախ են այսոր:

— Ի՛նչի՞ պիտի ուրախ չլինեն, ոռճիկի հավելումով, դրան գումարիւր յերկու ամսվա տարբերութիւնը, տես ո՞ւր կ'դնա...

— Հո՛, Վահրամ, դու դիտե՛ս, վոր այս յերեկո նոր տեղկոմի ընտրութիւնն ե:

— Նոր եմ լսում, — անտարբեր կերպով պատասխանեց Արեւլանը, թեև յերկու որ առաջ կարդացել եր հայտարարութիւնն:

— Վո՞նց ես նոր լսում, քանի վոր յերեք որ ե հայտարարված ե:

— Աչքովս չի ընկել:

— Իհարկե, դու չգիտես նաև, վոր նոր տեղկոմի թեկնածուն դու լես:

Արեւլանը շիկնեց ու աչքերը փալկեցին:

— Ներողութիւն, դու ավելի լավ թեկնածու լես, քեզ պիտի ընտրենք, — ժպտով ասաց Արեւլանը:

— Այ խելոք, արդեն բոլոր աշխատակիցներն իմ կարծիքին են, դու վո՞նց ես ինձ ընտրում:

— Միենուէն ե, յես կհրաժարվեմ:

— Դե եղպես հիմարություն չանես, Վահրամ, մեր բոլորի կարծիքով ամենահարմար թեկնածուն դու յես,— համոզելու տոնով ասաց Հասմիկը ու շարունակեց չխչկացնել մեքենան:

Ներքին մի ուրախություն շոյում եր Արեւյանի սիրտը: Նա գլուխը սեղանին թեքած աշխատում եր: Մտքերով տարված՝ Արեւյանը չէր լսում, վոր հաշվապահ Սմբատը կանչում եր իրեն աշխատավարձ տալու:

— Վահրամ, քեզ հետ ե, գնա՛ս ոտճիկ ստանալու:

— Արեւյանը գլուխը բարձրացրեց, դիմողը Հասմիկն եր:

— Եդ վո՞նց ե, վոր չլսեցի,— ասաց Արեւյանը ու քայլեց դեպի հաշվապահի սեղանը:

Շուտով գրասենյակում աշխատանքը դադարեց, գրասենյակը դատարկվեց. սակայն Արեւյանը դեռ շարունակում եր աշխատել, յերբ Հարեթը ներս մտավ:

— Ելի՞ ֆոս ես դու. ուխտ ես երե դեյի ավելը ներս չմտնի կանցելարը՝ դու. չե՞րթեա հատից,— ժլատալով դիմեց Հարեթը:

— Հրես գնում եմ, Հարեթ,— ասաց Արեւյանը ու հավաքեց սեղանի վրայից թղթերը:

— Եսոր քեզ տեղկոմ պիտի ընտրենք, ենքան աշխատի, վոր հոգիդ ելնի:

— Ձե, Հարեթ ջան, տեղկոմ Հասմիկին ենք ընտրելու:

— Ինչիս չի, հերողութեն կենես. արդեն խոսք մեկ ենք երե:

— Դե լսով, Հարեթ ջան, եղ հետովա գործ ե. ցը՝...
— ասաց Արեւլանը ու դուրս չեկավ դրասենյակից. նա վողեորված եր և ուրախ-ուրախ քալլում եր դեպի տուն:

Յերեկոյան Արեւլանը տուն վերադարձավ ուրախ տրամադրութեամբ: Այդ որը Շուշիկն առանձնապես սիրելի չեր դարձել նրա համար: Սենյակ մտնելուն պես նա փաթաթվեց նրան, համբուրեց և ապա սկսեց պատմել նրան այն բոլորը, ինչ-վոր տեղի չեր ունեցել ժողովում: Պատմեց, թե ինչպես ընկերները ժողովին դրեցին իր թեկնածութունը և միաձայն կերպով տեղիում ընտրեցին իրեն:

Շուշիկն ուրախ եր այդ բոլորի համար. նա գոհ եր, վոր Վահրամը սիրում և հասարակական աշխատանքն այնպես՝ ինչպես ինքը:

— Յեթե այսպես հաջող լինի նաև կուսակցութեան մեջ անցնելը, շատ լավ կլինի, — ասաց Արեւլանը և նստեց թեչի սեղանի առաջ:

— Յեվ ինչո՞ւ հաջող չպիտի լինի. չես զարմանում եմ, վոր դու մի բոպե անգամ կասկածում ես այդ մասին. չե՞ վոր կուսակցութեան մեջ անցնողները քեզնից վոչնչով ավելի չեն, — պատասխանեց Շուշիկը ու նստեց նրա դիմաց:

Վոսեկեդույն թեչը հորանջում եր կարծես Արեւլանի առաջ. նա աչքերը հառած թեչի բաժակին՝ խորացել եր մտքերի մեջ, բաժակից բարձրացող գոլորշու նման հեռուներն եր սլացել Արեւլանի միտքը և հազար ու մի բաների մասին եր մտածում նա:

Նրա աչքերի առաջից կարծես իրար չետեից հերթով անցնում էին Հարեթը, վոր այնքան ծիծաղելի

կերպարանք ունեւր այդ բոլորին և Հասմիկը, ճիշտ
այն դրութեամբ, յերբ նա աչքերն անորոշ թի տարա-
ծութեան ուղղած խոստում եր, պաշտպանում իր թեկնա-
ծութեանն առանց ուշադրութեան դարձնելու Արեւելանի
վրա և մատնելը, վորոնք այնքան վճռական ու համառ
կերպով բարձրացան ու վճռեցին իր դրութեանը:

Վաղն Արեւելանը կընդունի տեղկոմական գործերը.
կընդունի ու գործի կանցնի և ահա մի որ իր մոտ կգա
հաշվապահ Սմբատը, կամ ցրիչ Գրիգորը և կտրտնջա
իր առաջ, կգանգատվի, վոր իրեն ժամանակին չի
տրվում արձակուրդ, կամ ինքը շատ է աշխատում,
բայց արտաժամյա վարձատրութեան չի ստանում ու
այդ բոլորի համար ինքը պայքարի մեջ կմտնի բաժնի
վարիչի հետ, կպաշտպանի Սմբատի, Գրիգորի կամ
Հարեթի շահերը ու կպահանջի, վոր բաժինը բավա-
րարի նրանց և դրական լուծում կտա այդ բոլորին:
Վորքան գոհ կմնան այդ բանից զժգոհողները և վոր-
քան համակրելի կդառնա ինքը նրանց աչքում:

Դեռ հեռու կգնային Արեւելանի մտքերը, յիթե
չլսվեր Շուշիկի ձայնը.

— Թեյդ սառում է, Վահրամ, խմիր:

Արեւելանն սթափվեց և նկատեց, վոր բաժակից
բարձրացող գոլորշին չկար այլևս, նա թեյի բաժակը
ձեռքն առավ ու սկսեց խմել:

Արեւելանի դեմքը փալցում եր. թեյից հետո ուրախ
տրամադրութեանը կարծես ասել տվեց Արեւելանին այն
բոլորը, ինչ-վոր շատ հաճախ պահվում եյին նրա հո-
գու. խորքերում:

— Յեթե այն, ինչ լես մտածում եմ, Շուշիկ, հա-
ջող ընթանա, դու կտեսնես, վոր լես դեռ շատ առաջ

կղնամ. ինձ մինչև իսկ միութեան պատասխանատու քարտուղար կընտրեն կարճ ժամանակում,—վերջին խոսքերն Արեւլանը շիկնելով ասաց և վաւրկենապես փոշմանեց իր ասածի համար:

Այդ խոսքերը թեև Շուշիկի վրա հաճելի տպավորութիւն չթողին, թեև նա զգաց, վոր Արեւլանը միփիչ ավելի հանդգնութիւն և լերևան բերում, սակայն չուզեց նրա սիրտը կոտրել այդ վաւրկանին և նրան պատասխանելու հարմար խոսք չգտնելով, գլխով հավանութեան նշան արավ:

Ուշ եր արդեն, լերբ նրանք պառկեցին քնելու: Արեւլանը չեր հանգստանում անկողնու մեջ, ուրախութիւնից նրա քունը չեր տանում:

«Վճրքան կուրախանա կարագուլովը, լեթե իմանա այս հաջողութիւնը: Չե՞ վոր նա նաճախ խրատներ և կարգում այս մասին: Յե՞վ Արեւլանը հիշեց կարագուլովի խոսքերը՝ «Լավ ապրե՛լու համար միջոցների առաջ չպիտի կանգ առնել»: Ծիշտ և ասում կարագուլովը»—մտածեց Արեւլանը և շուռ լեկավ տեղի մեջ:

Ամբողջ գիշեր կիսաքուն դրութեամբ Արեւլանը տեսնում եր բաժնի վարիչ Մելիքանին, տաք-տաք խոսում եր նրա հետ, յերբեմն-յերբեմն ինչ-վոր խնդրի վրա վիճում ելին կարծես, Արեւլանը համառ կերպով պնդում եր իր ասածը, պահանջում եր ինչ-վոր բան, իսկ բաժնի վարիչն անզիջում կերպով նայում եր նրան ու սառը պատասխաններ տալիս: Ահա կրկին նրանք, կրկին ժողովը, վորտեղ աղմուկ և, վորտեղ Հաբեթը բերանը լայն բաց արած բարձր ձայնով ծիծաղում և, վորտեղ զանգահարում և նախազահր, խոսում և Հասմիկը ու միանգամից վճռականորեն բարձրանում են

մատնեիր: Ահա և նա, Կարազուլովը, վոր այնքան խաղաղ կերպով նաչում ե Արեւլանի վրա ու ձեռքն Արեւլանի մեջքին խփելով՝ հանդարտ տոնով տառւմ ե.

— Ապրիւս, Վահրամ, դու բռնել ես ճանապարհը, բարձրացիր, ավելի բարձրացիր:— Նրա ձայնից արթնացավ Արեւլանը ու կրկին շուռ չեկավ անկողնի մեջ:

VII

Տեղկոմ ընտրվելուց հետո Արեւլանը ցերեկները սովորականից ուշ եր գալիս տուն: Այս հանգամանքը առանձնապէս չեր վշտացնում Շուշիկին, սակայն նրան անհանգստացնում եր այն, վոր վերջին ժամանակներս ինչ-վոր փոփոխութիւն եր նկատում Վահրամի վերաբերմունքի մեջ: Նա զգում եր, վոր Վահրամն առաջվա պէս ուշադիր չե դեպի ինքը, վոր առաջվա պէս սիրալիր ու ժպտուն չի իր հանդեպ:

Այս յերևույթը մեկ-մեկ Շուշիկը վերագրում եր Վահրամի զրադված լինելուն, սակայն այդ յենթադրութիւնն անհիմն եր դառնում նրա համար, յերբ ազատ և տոն որերին ել Արեւլանը նույնպիսի վերաբերմունք եր ցույց տալիս իրեն:

— Ի՞նչ ե նշանակում արդոք սա, — մտածում եր Շուշիկը և նրա մտքերը շատ հեռուններն ելին գնում. այդպիսի բոպեններին մեկ-մեկ ջրակալում ելին Շուշիկի աչքերը, դիմքը դառնում եր տրտում, մեղամաղձոտ:

Արեւլանը տանը լինում եր սակավախոս և մտախոհ. նա ինչ-վոր ջղալին վիճակ եր ապրում, ինչ-վոր բան անհագստացնում եր նրան:

Առանձնապէս մռայլ եր լինում Արեւլանն այն որերին, յերբ առորչա ծախսերի համար դրամ չեր ու-

նենում. այդպիսի որերին հատկապես ջղախնայնում եր Արեւլանին այն հանգամանքը, վոր Շուշիկն իր աշխատավարձով իր մորն և պահում, բայց Արեւլանն աշխատում եր թաղցնել, պահել այդ ջղախութլունը, դղացնել չտալ այդ Շուշիկին, քանի վոր ինքն այդ առթիւ նախորոք տվել և իր համաձայնութլունը:

Շուշիկն աշխատում եր մխիթարել, հուսադրել նրան, սակայն այդպիսի բողոքներին Շուշիկի քաղցր խոսքերը թուշնի պես ներգործում էին նրան, այդպիսի բողոքներին ատելի չեր թվում նրան Շուշիկը:

Բացի այդ Արեւլանի ջղերի վրա ազդում եր նաև այն սպասողական դրութլունը, վորի մեջ ապրում եր նա. մի շարաթ առաջ նա արդեն տվել եր իր դիմումը կուս. շարքերն անցնելու համար. նա թեև առանձին-առանձին հարց ու փորձ եր արել այդ մասին բջիջի բշուրոյի անդամներին, թեև իմացել եր բջիջի առանձին անդամների կարծիքը, սակայն այդ բոլորն Արեւլանին չեր բավարում, նա անհանգիստ եր և սպասում եր հարցի վերջնական լուծման:

Մի առավոտ, չեր Արեւլանն աշխատանքի չեր գնում, փողոցում նրա առաջից քայլում եր մի աղջիկ. Աղջիկը գեղեցիկ եր, բարեկազմ ու լիքը մարմնով, կլոր գեմքով, գեղեցիկ աչքերով: Արեւլանն ինքն էլ չիմացավ՝ թե ինչո՞ւ այդ բողոքին համեմատութլան մեջ գրավ Շուշիկին այդ աղջկա հետ. և նրան թվաց, վոր Շուշիկը շատ հեռու չի այդ աղջկա հետ համեմատվելուց, վոր այդ աղջիկն առանձին մի գրավչութլուն ունի, վոր նրա շարժումների ու քայլերի մեջ էլ առանձին մի կյանք կա և դպաց, վոր նա անհասանելի մի աղջիկ է:

Այդ համեմատութիւնը խորը կերպով ազդեց Արեւլանի հոգու վրա, նրա տրամադրութիւնն ընկավ, դեմքը մռայլվեց, և այդ կատարվեց վոչ թե նրա համար, վոր այդ աղջիկը Շուշիկից շատ գեղեցիկ եր ու գրավիչ, այլ աչն պատճառով, վոր Արեւլանն զգաց, վոր ինքը կորցրել և ինչ-վոր բան, նորից սիրելու հնարավորութիւնը:

Այդ առավոտ ճանապարհին ուրիշ աղջիկների ու կանանց ել հանդիպեց Արեւլանը, սակայն բոլորի հանդեպ ել Շուշիկը շատ նվաստ ու սովորական կին թվաց նրան և բոլորի հանդեպ ել Արեւլանն զգաց աչն բոլորը, ինչ-վոր առաջին աղջկա հանդեպ:

Յերբ Արեւլանը գրասենյակ մտավ, արդեն բոլոր տշխատակիցներն իրենց տեղերումն էին. այդ առաջին անգամն եր, վոր Արեւլանն ուշանում եր աշխատանքից. այդ պատճառով ել մեքենագրուհի Հասմիկն Արեւլանին տեսնելուն պէս զարմացած դիմեց նրան:

— Ես թնչ և պատահել քեզ, հո հիվանդ չեցիր:

— Ի՞նչ հիվանդ, քեֆի գնացած կլինի գիշերը,— մեջ ընկաւ հաշվետարներից մեկը:

— Վհչ հիվանդ եցի, վհչ ել քեֆի եցի գնացել. գիշերը մինչև յերկուսը տեղկոմական արձանագրութիւններն ու գործերն եմ կարգի բերել,— Հանդարտ կերպով պատասխանեց Արեւլանը ու նստեց սեղանի առջ:

— Հավ կրակը գցինք քեզ, հը, Վահրամ,— չարածճի ժպիտով շարունակեց Հասմիկը:

— Ել մի ասի. բայց դու չմոռանաս, Հասմիկ, փոխարենը մի որ կհանեմ,— կեղծ դժգոհութիւնամբ ասաց Արեւլանը ու շարունակեց աշխատանքը:

— Լա՛վ, մի՛ դժգոհի, այնքան ել վատ բան չի

մեր արածը: Մեր միութեան քարտուղարն էլ տարի ու կես առաջ տեղկոմ եր:

— Ասում ես, ելի՛, Հասմիկ, ի՞նչ ասեմ, — շնչաց Արեւլանը:

Խոսակցութիւնը դադարեց. Արեւլանը խորացել էր աշխատանքի մեջ և աշխատելու հետ միասին ինչ-Վոր բաների մասին եր մտածում նա: Հասմիկի վերջին խոսքերը դուր չեկան Արեւլանին և նա այդ մասին եր մտածում:

Յերբ իրեն առաջ քաշեն ու միութեան պատասխանատու քարտուղար ընտրեն, այն ժամանակ ինքն աչքի ընկնող մարդ կդառնա քաղաքում. շատերը կխոսեն նրա մասին, կզան իրեն մոտ, գործ կխնդրեն կամ խորհուրդներ կհարցնեն իրենից. այն ժամանակ ինքը շատ լուրջ կլինի ու պատշաճ լեզվով կխոսի նրանց հետ:

Այս մտքերի մեջ ընկած, Արեւլանը տեսնում եր նաև պատասխանատու քարտուղարի առանձնասենյակը, գործավարը և գեղեցիկ մի մեքենագրուհի, Վորին Արեւլանը, չգիտես ինչու, պատկերացրեց ճիշտ այն աղջկա նման, Վորին այդ առավոտ հանդիպել եր փողոցում:

Հանկարծ նա հիշեց Շուշիկին, և նրա կողքին չերկաց նա, մեքենագրուհին, այդ անհասանելի աղջիկը, Վորի առաջ այնքան սովորական, այնքան հասարակ ու նոխսոտ մի կին եր Շուշիկը:

Յերբ Արեւլանն աշխատանքից տուն վերադարձավ, Շուշիկն արդեն չեկել, ճաշը պատրաստել եր և սեղանի առաջ նստած լրագիր եր կարդում:

Շուշիկի տրամագրութիւնը բարձր եր, ինչ Վոր բան կարծես մոռացնել եր տվել ամեն ինչ և ներքին մի ուրախութիւն փայլում եր նրա աչքերի մեջ:

Ներս մտնելուն պես Աբելյանն զգաց այդ և ա-
կամա ինքն ել ժպտերես դարձավ ու մոտենալով Շու-
շիկին, համբուրեց նրա ճակատը:

Շուշիկին դուր չեկավ այդ, նրան թվաց, վոր
շատ չերկար ժամանակ Վահրամն այդպես սիրալիր չեր
չեղել իր հանդեպ ու նրա ժպտուն աչքերից արցունքի
չերկու կաթիլ գլորվեցին նրա թուխ աչտերի վրա:
Այդ վայրկյանին Շուշիկն արևի ճառագայթների տակ
ժպտացող ամպի քուլայի չեր նմանում, նրա տխրու-
թյունն արտահայտող դեմքի վրա ուրախության մի
վառ ժպիտ եր խաղում:

Աբելյանի վերաբերմունքից խրախուսված Շու-
շիկը լրագիրը մեկնեց նրան ու ժպտաց.

— Կարդն, Վահրամ, տես ի՞նչ կա եստեղ:

Աբելյանը վերցրեց լրագիրը:

— Ի՞նչ կա վոր, — շնչաց նա ու շուռ տվեց
լրագիրը:

— Ապա չերկրորդ չերեսը նայիր, — կարծես ան-
համբեր կերպով դիմեց Շուշիկը:

Աբելյանի աչքերը չովեցին.

— Ես քո նկարն ե. իսկ և իսկ դժւ չես. իսկ հող-
վածն հիվ ե գրել:

— Գրողը տպարանի բանվորներից ե:

Շուշիկի այդ հայտարարութունը թեև Աբելյա-
նին դուր չեկավ, սակայն բարձր ձայնով նա կարդաց
հողվածը:

Լրագրի մեջ Շուշիկին գովել էին՝ չերեսուն ան-
գրագետ բանվորուհիներին գրագետ դարձնելու հա-
մար:

— Դու գիտեցի՞ր առաջուց այդ հողվածի մասին,

- ուղիղ Շուշիկի աչքերին նայելով հարցրեց Արեւլանը:
- Վո՛չ, լիս եսոր իմացա:
- Իսկ նկարդ դու չե՞ս տվիլ, — նույն դրութեամբ շարունակեց Արեւլանը:
- Նկարս չերեմ ընկերուհուցս են վերցրել, — քաշվելով ասաց Շուշիկն ու սկսեց ճաշի սեղանը պատրաստել:
- Քիչ հետո նրանք ճաշում էին: Արեւլանի դեմքը խոփոտվել էր. մի հին կասկած արթնացել էր Արեւլանի հոգու մեջ ու կարծես չեղք էր փնտռում արտահայտվելու. սակայն Արեւլանը զսպեց ու վռչինչ չասաց:
- Իսկ լիս ալսոր բաժնի վարիչի հետ համաձայնութեան չեկա, վոր տեխնիկական աշխատակիցների թիվը մեկով ավելացնի և չերկու հաշվատարների աշխատավարձն ավելացնի հնգական ուղբով, — հպարտ կերպով ասաց Արեւլանը:
- Տեխնիկական աշխատակիցները շատ են աշխատում ձեզ մոտ, — հարցրեց Շուշիկը:
- Են ել վո՛նց, Հարեթն առավոտյան ժամը 6-ին դալիս է, չերեկոյան 5-ին տուն դնում:
- Իսկ Հարեթն ինքը բողոքում էր ալդ մասին, — շարունակեց Շուշիկը:
- Ձեր բողոքում, բայց հո չեր կարելի ալդպես թողնել, — ասաց Արեւլանը ու տեղից վերկենալով սկսեց քայլել սենյակի չերկարութեամբ:
- Հո, իմիջի ալլոց, կուսբջիջի քարտուղարն ալսոր ասաց, վոր դիմումս չերկուշարթի չերեկո քննութեան պիտի դրվի, տեսնե՞նք, — կարծես հանկարծակի հիշելով ասաց նա:

Յերեկոյան Արեւլանն այցելեց գննելու Կարագոլովին: Վերջին ժամանակները նա հաճախ չեր լինում նրա մոտ: այդ պատճառով ել Կարագոլովը նախատեց նրան:

— Լավ տղա չես, Վահրամ, դու գիտես, վոր մենակութունից սիրտս տրաքվում ե, իսկ դու շաքաթներով չես բարեհաճում ներս մտնել,— սրտնեղած ասաց Կարագոլովը և ավելացրեց.— Ելլաս այսոր նամակ եր գրել. գրում ե, վոր աշնանն անպայման պիտի գա հստեղ աշխատելու:

— Ուշ գալուս համար մի մեղադրիր ինձ, գննորդ— ժպտալով ասաց Արեւլանը, իսկ Ելլայի գալուս համար շատ ուրախ եմ:

— Յես ել ուրախ եմ, Վահրամ, այդ քերկու տեսակետից լավ ե. նախ, վոր մենակ չեմ լինի, քերկորդն ել, վոր ստիպված չեմք լինի կրկնակի ծախս անել:

— Իհարկե, ախր ի՞նչ միտք ունի այդ: Ելլան լավ ե մտածել. կգա եստեղ կաշխատի ու շատ լավ կլինի,— համոզված կերպով ասաց Արեւլանը:

— Իսկ դու ի՞նչ ես անում, գործերդ ի՞նչպես են գնում,— կարճատև լուրթունից հետո հարցրեց Կարագոլովը:

— Գործերս լավ են. դիմում եմ տվել արդեն կուսակցութեան մեջ մտնելու:

— Նդ ե, չես կորչի,— կամացուկ շշջաց Կարագոլովը:

— Բայց թի իմանաս ինչպես եմ աչք մտել, ուղղակի կգարմանաս, — վոգևորված շարունակեց Արեւլանը,— բջջի անդամներից վորի կարծիքը հարցրել եմ իմ ընտրութեան մասին, դրական կարծիք եմ ստացել:

հիմա համարյա ել չեմ կասկածում: Բայց դրա դիմաց լավ աշխատում եմ, մի շարաթ տռաջ կարողացա հիմնարկութիւն մեջ մի սենյակ ձեռք գցել, թերթեր դուրս գրել տվի, մի քանի շախմատ գնեցի տեղկոմական ֆոնդից, հիմա ակումբանման մի բան ե դարձել: Այսուր ել տեխնիկական մի աշխատակից ավելացնել տվի և համաձայնութիւն չեկա բաժնի վարիչի հետ, վորպեսզի չերկու հաշվետարների աշխատավարձը բարձրացնի: Դիտե՛ս, այս բոլորը մեծ բան չե, բայց մեծ և լերեւում. ասում են, խոսում են, թե տեղկոմն այսպես լավ և աշխատում և այլն:

— Զիշտ ե, սիրելիս, եղպես ե,— ավելացրեց Կարապուլովը, վոր մինչ այդ ուշադիր կերպով լսում եր.— մի չնչին հարմարութիւնը, մի փոքրիկ ծառայութիւնը մասսայի աչքին խոշոր բան և լերեւում:

Փամի տասն եր, վոր Արեւլյանը դուրս չեկավ Կարապուլովի բնակարանից: Դրսում սառնամանիք եր, սառած գետինը ճոճոռում եր նրա վոտների տակ: Նա գնում եր տուն և ճանապարհի ամբողջ ընթացքում Շուշիկի մասին եր մտածում:

— Ե՛հ, մեծ հիմարութիւն և ամուսնանալը,— շշնջաց նա, չերբ բակի դռնից ներս եր մտնում:

VIII

Ամիսներ անցան իրար չտեւից, աշունը վրա հասավ: Արեւլյանի կյանքն զգալի փոփոխութիւնների չենթարկվեց այդ ամիսների ընթացքում: Նա վաղուց արդեն կուսակցութեան թեկնածու անդամ ե, իսկ վերջերս նա ընտրվեց Խորաշխ միութեան քարտուղար: Այժմ արդեն աչքի ընկնող անձնավորութիւն և Արեւ-

յանը դավառական այդ քաղաքում, շատերը հարգանքով բարեւում են նրան, շատերը խոսում են նրա մասին, դովում են նրա աշալուրջ և ուշադիր վերաբերմունքը միութեան անդամների վերաբերմամբ։ Ամեն որ շատ մարդիկ են գնում նրա մոտ զանազան խնդիրներով, վորոնց Արեւյանը սիրալիր վերաբերմունք և ցույց տալիս, քաղցր խոսքերով ու մտերիմ չեղանակով հուսադրում և աշխատանք խնդրողներին և միշտ ժպիտը դեմքին ճամբու գնում նրանց։

Այլ եր Արեւյանն ընտանիքում. ամիսների ընթացքում նրա մեջ կուտակված հիասթափութունն արդեն արտահայտվել եր Շուշիկի հանդեպ, արտահայտվել եր և տեղի տվել ընտանեկան դրամային, վորը հաճախակի կերպով Արեւյանի առաջ սուր կերպով գնում եր կնոջից բաժանվելու խնդիրը։

Նա վարկաբեկող պատճառներ եր վորոնում, ուղում եր այնպես անել, վոր Շուշիկն ինքը առաջինը ցանկութուն հայտնի բաժանվելու, վորպեսզի ինքն անմեղ դուրս գա այդ բոլորի միջից, վորպեսզի այն բոլորը, վոր նա ձեռք և բերել, վոտնատակ չլինի։

Սակայն Շուշիկը կին եր, վորքան ել ազատ եր մտածում նա, վորքան ել չեր ընկճվում Արեւյանի հանդեպ, սակայն ներքուստ նա սարսափում եր խայտառակվելուց, վախենում եր ընկերների առաջ ծաղր ու ծանակի առարկա դառնալուց։

— Գոնե այս դրութեան մեջ չլինեյի, գոնե վոտքս ազատ լիներ, — մտածում եր նա, իսկ մանուկը շարժվում եր նրա ներսում։

Մի անգամ նույնիսկ Արեւյանը կասկած հայտնեց Շուշիկի հավատարմութեան մասին։

— Դուք եւ այդ չերեխան, վոր սնուցանում ես արդանդիդ մեջ, դա ուրիշ հոր զավակ ե, — թունավոր շեշտով ասաց Արեւյանը:

Արեւյանի այս հայտարարութիւնը կաշճակի պես ցնցեց Շուշիկին:

— Ստոր,— ճչաց Շուշիկն ու մահճակալի վրա ընկնելով բարձր ձայնով հեկեկաց:

Շուշիկի հեկեկոցը սարսափ ազդեց Արեւյանի վրա, մի վայրկյանում նա կորցրած զգաց իր ամբողջ կայրերան ու փոշմանեց այդ հայտարարութեան համար:

— Յե՛ղ դժբախտաբար կոմունիստ ես դու... — հեկեկանքի միջից լսվում եր Շուշիկի ձայնը: Արեւյանը քայլում եր սենյակում. քիչ հետո նա մոտեցավ Շուշիկին, շուրջ նրա գլուխը եւ համբուրեց ճակատը:

— Լնձ, չես ներողութիւն եմ խնդրում, լաց մի լինի...

Շուշիկը չեր զաղարում:

— Ամսթ քեզ, Վահրամ, չես քեզանից չելի սպասում... — շարունակում եր նա:

— Կամաց, լնձ, ամսթ ե, հարեաններն ինչ կասեն հիմա, — շփոթված համոզում եր Արեւյանը:

— Ինչ վոր ասեն, քո մասին կասեն, իմ ճակատուրաց ե, ասաց Շուշիկն ու փոքր ինչ հանդարտվեց:

Այդ չերեկո Արեւյանը սրտնեղած դուրս չեկավ տնից ու հանդարտ քայլերով դիմեց դեպի քաղաքային այգին. ճանապարհին մտածում եր նա, մտածում եր իր ընտանեկան դրութեան մասին, մտածում եր Շուշիկի ե իր գործերի մասին:

— Կարեք չկա լարվել Շուշիկի հետ, լավ վախճան չի կարող ունենալ այդ. Շուշիկը կարող ե բողո-

քել, իսկ այդ բողոքն ամեն ինչ տակն ու վրա կանի,—
յեղրակացրեց Աբելյանը:

Քաղաքային այգին դատարկ եր: Աշնան քամին
անխնա կերպով պոկում եր կիսամերկ ծառերի ծած-
կույթի վերջին սաղարթները: Այգու գլխավոր ծառու-
ղին անցնելով, Աբելյանը դուրս չեկավ քաղաքային
այգին և դիմեց դեպի Կարադուլովի բնակարանը:

Յերբ նա բաղինեց Կարադուլովի սենյակի դուռը,
նրա դեմ ջահել մի աղջիկ դուրս չեկավ ու ներս հրա-
վիրեց Աբելյանին: Ծեր գենեբալը հանգստանում եր
մահճակալի վրա. դուռը բացվելուն պես բարձրացավ
տեղից, մոտեցավ Աբելյանին:

— Ծանոթացիր, Ելչկա, սա իմ հին բարեկամի
վորդին ե, մի ազնիվ չերիտասարդ ..

Աղջիկը ժպտալով ձեռը դրավ Աբելյանի ափի մեջ
և ծանոթացան:

Աբելյանը գլխարկն ու պլաշը հանեց ու նստեց
Ելչայի առաջարկած աթոռին:

— Արդեն չերկու որ ե, վոր մենակ չեմ, Վահ-
րամ, Ելչկաս չեկավ, ձանձրույթս փարատեց,— ուրախ-
որամադրությամբ ասաց Կարադուլովը:

— Այդ շատ լավ չեղավ— հանդարտ տոնով ասաց
Աբելյանը ու ժպտալով դարձավ դեպի Ելչան, — գիտե՞ք
վորքան շատ եր մտածում ձեր հալըն իր Ելչայի մասին:

Աղջիկն ուրախ կլկչալով ծիծաղեց:

— Պապաս ինձ շատ և սիրում, իհարկե պիտի
մտածի,— վրա տվեց Ելչան ու փաթաթվելով Կարադու-
լովին՝ համբուրեց նրան:

Ելչան խոսում եր արագ, շարժ ու ձևերով. նա
կայտառ աղջիկ եր, թրվուուն: Խոսակցության ընթաց-

քում Արեւլանը մեկ-մեկ ուշադիր կերպով նայում էր նրան։ Ելլան շուտ-շուտ ժպտում էր, և ժպտալիս նրա վարդապետն ալտերի վրա գոյանում էին չերկու քընքուշ փոսիկներ, վորոնք առանձին դրավչութունն էին տալիս նրա դեմքին։

Յերբ խոսք չեղավ Ելլալի համար համապատասխան պաշտոն գտնելու մասին, Արեւլանը խոստացավ աշխատել այդ ուղղութեամբ. այդ ըոպելին Արեւլանի ու Ելլալի հաշաքներն իրար հանդիպեցին, վորոնք միքանի ալնթարթից հետո կախվեցին ներքև։

Քիչ հետո արծաթափայլ հեշտալեռը թշշում էր սեղանի գլխին։ Ելլան բաժակները շխշխկացնելով թեյ էր լցնում։ Թեյ խմելու ընթացքում Ելլան պատմում էր Թիֆլիսի կուլտուրական կյանքի մասին, ու համեմատում այդ քաղաքի հետ. նա սքանչացած պատմում էր ենտեղի թատրոնի ու ռպերաների մասին, նշանավոր կոմպոզիտորների ու գերասանների անուններ էր տալիս և նրանցից չուրաքանչյուրի մասին իր հիացմունքն ու համակրանքն էր արտահայտում։

— Ի դեպ, պետք է ասեմ, վոր չես շատ եմ սիրում չերաժշտութունը, հաջող նվագում եմ դաշնամուրի վրա, բայց սփսոս ալժմ դաշնամուր չունենք. — այս ասելով, Ելլան իր չերկար ու քնքուշ մատներն սկսեց ճկունորեն շարժել սեղանի վրա։

Ելլալի բոլոր ասածներին Արեւլանը հավանութուն էր տալիս, իսկ ծեր գեներալը լուռ ձխում էր։

Բավական ուշ էր, չերբ Արեւլանը պատրաստվեց տուն գնալու։ Այդ միքանի ժամվա ընթացքում Ելլան բավական մտերմացել էր Արեւլանի հետ. այդ պատճառով էլ նա մինչև փողոցի դուռը ճամբու գրեց Ա-

բեկանին և պարտավորեցրից, վոր նա հաճախ այցելի իրենց:

Դրսում ցուրտ եր, աշնան քամին սուլում եր դատարկ փողոցներում, վորի շնչից դողացող հեռագրալարերն ու պատուհանների փեղկերն աղմկում ելին:

— Գեղեցիկ աղջիկ և ելլան,— մտածում եր Արեւյանը ու կարծես լսում եր նրա կշկշան ծիծաղի ձայնը. — բայց ինձ ի՞նչ, չե՞ վոր նա շուտով կիմանա, վոր իս ամուսնացած մարդ եմ...

Շուշիկը վառարանի առաջ նստած, գլխիկոր մտածում եր, չերը Արեւյանը ներս մտավ. նրանք վոչինչ չասացին իրարու, սենյակում լուսթյուն եր տիրում:

Առավոտյան Արեւյանն աշխատանքի գնալուց առաջ տասը ռուբլի թողեց սեղանի վրա և անխոս դուրս գնաց: Դեռ մի քանի որ առաջ Շուշիկը խնդրել եր նրանից այդ գումարը, վորպեսզի առաջուց չերեխայի համար հագուստ և անհրաժեշտ շորեր պատրաստի: Չե՞ վոր նա շուտով լույս աշխարհ պիտի գա, այդ պատճառով ել Շուշիկը մի ամիս և արդեն, վոր արձակուրդի մեջ և:

Աշնան ամպամած որ եր այդ տառավոտ, Շուշիկի պես արցունքոտ ու տխուր եր չերկինքն ել այդ ուրը, նրա աչքերի պես թախծոտ եր նա չել:

«Գուցե չերեխայի ծնվելուց հետո Արեւյանի վերաբերմունքը փոխվի. — փորձվածներն ասում են, վոր չերեխաները սիրո կամուրջ են հանդիսանում ամուսինների միջև» — մտածում եր նա և հուլիսի մի ազոտ կաշծ փափաջում եր նրա սիրտը:

Այդ ուրը Շուշիկն իր առորչա գործերը վերջաց-

ներուց հետո, չերկար սպասեց Արեւլանին, սակայն Արեւլանն աշխատանքը վերջացնելուց հետո տուն չգնաց: Նա նուցեց ճաշարաններից մեկում և դիմեց գեպի Կարազուլովի բնակարանը: Նա չեւ գնա անտեղ, լեթե կարիք չլիներ Ելլայից տեղեկանալու, թե արդյոք նա դիտե՞ հայերեն շրիֆտ ունեցող մեքենայի վրա աշխատել, թե վոչ: Այնպես վոր կսխալվի Ելլան, լեթե մտածի, վոր Արեւլանն իրեն տեսնելու համար և չեկել:

Աշխատանքի ժամերը դանդաղ ելին անցել գրասենյակում այդ որը: Արեւլանը շուտ-շուտ նայել եր ժամացույցին, վորի սլաքները կարծես համառ կերպով վորոշել ելին դանդաղ շարժվել և վերջը ձանձրուլթն ալն աստիճանի չեւ հասել, վոր նա ստիպված եր լեղել կես ժամ շուտ դուրս գալ գրասենյակից: Յեւ ահա նա քալում և գեպի Կարազուլովի բնակարանը և վորքան մոտենում և նրան, ալնքան նրա սիրտն արագ և ուժեղ և բարախում. նա իր ուրախ տրամադրութլան հետ միասին գգում եր նաե տնորոշ մի վախ և նրան թվում եր, վոր ինքն ինչ վոր շփոթված վիճակի մեջ և:

Կարազուլովի սենյակում Ելլան մենակ եր. նա կոկետութլամբ ներս հրավիրեց Արեւլանին և ժպտալով ձեռքը գրեց Արեւլանի ափի մեջ:

— Նստիր, խնդրեմ, — մտերիմ տոնով ասաց Ելլան և տթոռ առաջարկեց նրան:

— Վոչ, շուտով պիտի գնամ, ներեցեք, վոր անհարմար ժամանակ եմ լեկել, — շփոթութլունից կակաղելով ասաց Արեւլանը, — չեա չեկա իմանալու, թե դուք կարճդ եք հայերեն շրիֆտ ունեցող գրամեքենայի վրա աշխատել, թե վոչ:

— Յես միշտ ուռածներն եմ տալել—խորամանկ ժպիտով ասաց Նլյան:

— Ափս՛ս, մի շատ լավ տեղ կար:

— Վոչի՛նչ, չերևի ուրիշ հարմար տեղ կլինի: Դրա մասին շատ ել մի անհանգստանա, դեռ նստիր տեսնենք՝ ի՞նչ նորութիւն ունես:

Արեւլանը նստեց: Անորոշ մի դող պատել եր նրան: Գուցե այդ նրանից եր, վոր Նլյան մենակ եր սենյակում, գուցե ցուրտ եր...

— Ն՛հ, ասա տեսնենք ինչ կա քաղաքում,—ժըպտուն հայացքը համառ կերպով Արեւլանի աչքերին ուղղելով հարցրեց Նլյան,—ինչ չեկել եմ քաղաք՝ դուրս չեմ չեկել:

— Ամեն ինչ սովորական ե. միայն վաղվանից հետաքրքիր կինո-նկար ե գնում, արժե տեսնել,—պատասխանեց Արեւլանը:

— Ափսոս վոր մենակ չեմ կարող գնալ. իսկ պապաս եղպիսի տեղեր չի գնում:

— Յեթե ցանկանաք՝ միասին կգնանք,—շիկնելով ասաց Արեւլանը:

Նլյան համաձայնվեց:

--- Թիֆլիսում ել չես վորեն տեղ մենակ չեցի գնում,—վրա տվեց Նլյան,—վոչ թե նրա համար, վոր վախենում եմ, այլ պարզապէս սիրտս նեղանում ե մենակութունից:

— Լավ, ուրեմն վողը չերեկո մենք միասին կգնանք,—ասաց Արեւլանը ու պատրաստվեց գնալու:

— Գիտե՛ս, պապաս դեռ ուշ կգա, դու կարող ես մնալ և ինձ մենակ չթողնել,—կրկին խորամանկ հայացքն Արեւլանի աչքերին ուղղեց ու ժպտաց Նլյան:

Արեւլանի մարմնով տաք մի հոսանք անցավ և նա չուզեց շարժվել տեղից:

— Ասենք կարելի չե՞ մի քիչ ել ֆնալ, մի բան, վոր աշխատանք չունեմ այս լերեկո:

Ելլան շուտ շուտ աչքի տակով նայում եր Արեւլանին և ուզողում վերնաշապիկը: Նա անհանգիստ եր. մեկ սենյակի դռանն եր նայում, մեկ Արեւլանին ու ձեռները սեղանին հենած՝ մատներով ինչ վոր շարժումներ եր անում:

Նրանք լերկուսն ել լուռ ելին:

— Այ, լեթե դաշնամուր ունենալի, լիս քեզ համար կնվագելի,—լուրթուռնը խզեց Ելլան,—լիս պետք ե աշխատեմ անպայման դաշնամուր ունենալ այս տարի:

Արեւլանը, վոր մինչ ալդ մտքերի մեջ եր խորասուզվել, կարծես ինչ-վոր բան եր ուզում վորոշել մտքի մեջ, սթափվեց Ելլալի ձայնից ու պատասխանեց նրան.

— Այնքան ել անհասանելի բանի չեք ձգտում, ցանկանաք՝ կունենաք:

Արեւլանի ձայնը դողում եր:

— Դու մրսում ես, Վահրամ:

— Կարծես թե...

Ելլան ծիծաղեց:

Արեւլանը կարծես ամաչեց ալդ ծիծաղից ու տեղից բարձրացավ:

— Յիս գնացի, արդեն ուշ ե, ուրեմն վաղը լերեկո մենք միասին գնում ենք կինո:

— Այո, կսպասեմ.—ասաց Ելլան ու մինչև դուռը գնաց նրա հետ:

Յեւ չերբ Արեւլանը ելլալի ձեռքը սղմեց, ելլան ժպտալով դիմեց նրան.

— Բարձիդ տակը մի քար դիր գիշերները, վոր չերբեք չվախենաս:

Արեւլանը հասկացավ այդ խոսքերի միտքը:

IX

Հաջորդ առավոտ Արեւլանը թեև ուրախ տրամադրութեամբ մտավ գրասենյակ, սակայն աշխատելու բոլորովին տրամադրութուն չունեի նա:

Այդ որն ակամա լսեց նա իր բոլոր ալցելուններին և ակամա պատասխանեց նրանց: Յերբ գործավարն ուղարկվելիք գրութունները ներկայացրեց նրան, ստորագրեց գրեթե առանց կարդալու, իսկ հաշվապահը զարմացավ, վոր այդ որն Արեւլանը չհետաքրքրվեց նրա գործերով: Յեւ այդպես վերջացավ աշխատանքի որը:

Տուն գալիս, ինչպես նաև ամբողջ որը, նա շարունակ մտածում եր ելլալի մասին, մտածում եր և աշխատում եր հասկանալ անցյալ գիշեր իրեն ցույց տված ելլալի վերաբերմունքը, փորձում եր վերլուծել, ըմբռնել ելլալի այս կամ այն գործողութեան իմաստը և նրա աչքի առաջ պատկերանում եր ելլան միշտ ժպտուն և շեշտակի հայացքն իր աչքերին ուղղած գրութեամբ:

— Ինչո՞ւ չեր ելլան միշտ այդպիսի հայացքով նայում իմ աչքերին. ինչո՞ւ շեշտեց նա, վոր կարագուլովը գեռ ուե կգա և գտավ, վոր չես կարող եմ մենակ չթողնել իրեն. չե՞ վոր չես կարագուլովի ներկայութեամբ ել կարող եյի մնալ նրա մոտ. կամ թե ինչո՞ւ

շուտ-շուտ դոճերին եր նայում, վերնաշապիկը ցած քաշում, ուղղում և ինչ վոր սպասողական զրուխւան մեջ նայում եր ինձ ու մատները շարժում սեղանի վրա,— մտածում եր Արեւլանը և ալդ բոլորից վորոշ լեզրակացութիւններ եր հանում նա:

— Խորամանկ աղջիկ ե ելլան, շատ խորամանկ,— ինքն իր մեջ շշնջաց Արեւլանը:

«Բարձիդ տակը քար դիր, վոր լերբեք չվախենաս» — կարծես հնչեց ելլալի ձայնը նրա ականջին:

— Վո՛չ լերբեք չեմ վախենա, ելլա՛, լերբեք:

Տանը, ճաշից հետո Արեւլանը մեկնվեց մահճակալին, ձեռները գլխի տակ դրեց ու մեջքի վրա պտուկած՝ խորացավ մտքերի մեջ:

Որը լերեկոյանում եր Շուշիկը, վոր պատուհանի առաջ նստած կարում եր, բարձրացավ տեղից և վառեց լույսը, իսկ Արեւլանը, վոր պառկած գրութւան մեջ քունը տարել եր, արթնացավ, լվացվեց և դուրս լեկավ տնից:

Ուղիղ ժամը 7-ին Արեւլանն ու ելլան ներս մտան կինո «Երատուն»: Արեւլանը լերկու տոմս գնեց ու մըտան դահլիճ: Սեանսը դեռ չեր սկսվել: Ներս մտնելուն պես բոլորի ուշադրութիւնը գրավեցին նրանք: Ելլան ալդ լերեկո ալիլի գեղեցիկ եր լերեում. նա հագել եր բալի գուլնի շոր, վորի վրայից մինչև կոնքն իջնում եր լերկնապուշ, գեղեցիկ գործված ժակեաը, իսկ գլուխը ծածկված եր գեղեցիկ ձևի վարդագուշ մի գլխարկով:

Սեանսը վերջանալուց հետո, լերը Արեւլանն ու ելլան դուրս լեկան կինոյից, արդեն ինն եր ժամի: Դրսում բարձրացել եր ցրտաշունջ մի քամի, վոր վո-

շու մի տհալին սլուհ ըրեանն առած քշում եր փողոցի
յերկարութեամբ:

— Յուրա ե,— շնջաց ելլան ու սղմվեց Արեւանին:
Արեւանի մարմնով տաք մի հոսանք անցավ:

— Յերբ պիտի տուն հասնենք. ենպես ել սոված
եմ վճր...

— Դեռ եսպես վաղ տուն չենք գնա,— առաց Ա-
րեւանը:

— Հապա...

Այդ ըրպելին նրանք անցնում ելին ճաշարանի
մոտով:

— Կգնանք ախտեղ, կընթրենք, ապա կգնանք,—
ելլալին դեպի ճաշարան ուղղելով առաց Արեւանը:

— Ձե, վահրամ, կարիք չկա տուն կգնանք—
առանց դիմադրելու շնջաց ելլան:

Նրանք ճաշարան մտան: Ճիրմակ սփռոցներով
ծածկված սեղանները ժպտում ելին կարծես: Ճաշա-
րանում ինչ-վոր ուրախ տրամադրութուն եր տիրում:
Հարավոր նվազախմբի նվազը կարծես կորչում եր
ընդհանուր աղմուկի մեջ: Սեղանների շուրջը հավաք-
ված մարդիկ բաժակ-բաժակի ելին խփում և դուրե-
կան հնչունականութեամբ լսվում եր շէրին կպչող
դանակների ճնկճնկոցը:

Արեւանն ու ելլան տեղավորվեցին սեղաննե-
րից մեկի յերկու կողմերում, մոտեցող աֆիցիանտը
պատվերն ստացավ ու գնաց: Յեւ քիչ հետո տապա-
կած ճուտի բլուղը շրջապատվեց շէրով ու մրգի վա-
զերով:

Ելլան ուտում եր ախորժակով, ուրախ կշկշում.
միքանի բաժակ դատարկելուց հետո, արդեն բարձրա-
ցել եր նրա տրամադրութունը:

Արեւլանը, վոր իրար չետից դատարկում էր
բաժակներն ու քիչ ուտում, կարմրել էր. այդ բոպե-
լին ինչ-վոր ուրախութուն թովում էր նրա սիրտը,
կոնյակն ու ելլան մոռացնել էլին տվել նրան ամեն
ինչ:

— Ե՛խ, ելլան, լավ ե տեսաքս, շատ լավ,—դգաց-
մունքներով լի արտահայտութեամբ շշնջում էր նա և
բաժակն ելլալի բաժակին խփելով դատարկում:

— Խմիր իմ կենացը, Վահրամ,—բաժակը լցնե-
լով, բառերը բերնում որորելով, ասում է ելլան:

— Խմեմ, ելլան, խմեմ,—շշնջում է Արեւլանը,
խսկ դու...

— Յես ել քո կենացը, ա՛յ, մինչև տակը...

— Ի՞նչ ե նվազում չերաժտախումբը, Վահրամ,
համ... Ի՞նչ ե նվազում... տալա կարո՞ղ ես ասել...

— Չգիտեմ, ելլան, ինչ ուզում ե թող նվազի...

— Վա՛յ, դու գիտես ու չես ուզում ասել... դու
մի կարծիր, թե չես հարբած եմ ու բան չեմ հասկա-
նում... չես ամեն ինչ ել հասկանում եմ. . . Ե՛յ, որկեստր...

— Կամոց, ելլան, անհարմար ե...

— Անհարմար վոչինչ չկա եստեղ, թո՞ղ...

Արեւլանը նույնց շուրջը, նվազախումբն էր և
հեռավոր մի սեղանի շուրջ հավաքված միջանի մարդիկ:

Քիչ հեռո Արեւլանը կանչեց աֆիցիանտին, տա-
սը ոտքի վճարեց նրան և ելլալի հետ միասին դուրս
չեկան: Նրանք չերկուսն ել որորվում էլին: Ելլան ամ-
բողջովին հենվել էր Արեւլանին. վերջինս գրեթե գըր-
կած էր տանում նրան:

— Ո՛ւր ես տանում ինձ, Վահրամ, չես դեռ տուն
դնալ չեմ ուզում... Ե՛յ, որկեստր:

— Դու չես ուզում հանգստանալ, Ելլա:

— Ուզում եմ, բայց վոչ տանը:

— Դե գնանք:

Նրանք թեքվեցին մի ուրիշ փողոց, ուր ելեկտրական լուսի տակ, չերկհարկանի մի շենքի ճակատին պարզ կերպով կարդացվում եր խոշոր տառերով գրված ցուցանակը. «Հյուրանոց ՍՏՂԻՊԱ»:

Արեւյանն ու Ելլան ներս մտան այդ շենքի դռներից ու սանդուխքներով վեր բարձրացան:

— Գրկիր ինձ, Կոլլա... չես վախենում եմ...

Արեւյանը սանդուխքների վրա գրկեց Ելլային ու կրքոտ կերպով սկսեց համբուրել նրան...

— Բայց դու սխալվեցիր, Ելլա, չես Կոլլա չեմ... Իսկ այդ սխալի համար դու պետք ե պատասխանես և չերեք համբուլրով...

Յեւ Արեւյանը կրկին անգամ կրքոտ կերպով համբուրեց Ելլայի շրթունքները:

Միքանի ըոպե հետո հյուրանոցի հերթապահը մի սենյակ տրամադրեց նրանց: Ելլան ու Արեւյանը ներս մտան: Հյուրանոցի հերթապահն ուշադիր կերպով լսեց դռան վրա պտտվող բանալու ձայնը և Ելլայի կշիռը...

— Ե՛յ, որկեստր...

Քիչ հետո սենյակում ամեն ինչ լռեց և այլևս վոչ մի ձայն չեր լսվում այնտեղից...

Ծեր գեներալը չիմացավ, թե Ելլան գիշերվա վրժամին տուն չեկավ, իսկ Արեւյանը չեր տուն հասավ, լուսաբացի մոտ եր: Նա աղմուկով բաց արավ սենյակի դուռը ու որորվեիով ներս մտավ: Շուշիկը քնած եր հանգիստ: Արեւյանը մոտեցավ մահճակալին ու

խոր ատելութեամբ հալացքը հառեց նրա վրա. այդ բոսկիւին կարծես կատաղութիւննից նրա արեւունը գըլխովը տվեց և նա քաշքշելով գետին գլորեց Շուշիկին մահճակալից, Շուշիկը ճչաց ու միքանի բոսկե խելքը կորցրածի պես դեսուդեն եր նալում ու չեւ հասկանում, թե ի՞նչ և պատահել իր հետ։ Արեւլանը մի քիչ դուրսուրս հետո քնեց, իսկ Շուշիկը ներսից սուր ծակոցներ եր դգում ու քունը չեւ տանում ալկա։

* * *

Դեպքը պատահելու հաջորդ առավոտը Շուշիկը հիվանդանոց գնաց և միքանի որ հետո ազատվեց։ Ծնվածն ալն չերխաներից եր, վորոնք արեւ լուսը չտեսած՝ գերեզման են իջնում։ Նրա դեմքը տխուր եր, կարծես տանջված լինեւ նա։ Շուշիկը թեւ չվշտացավ չերխալին մեռած ծնելու համար, սակալն չերխալի վշտահար կերպարանքը չեւ հեռանում նրա մտքից։

— Վիշտը մեռավ իմ մեջ և չես մեռած ծնեցի նրան,— ալգալիսի բոսկներին մտածում եր Շուշիկը և ալամա նրա աչքերի առաջ պատկերանում եր մեռած չերխալի տխուր և վշտահար դեմքը։

Հիվանդանոցից դուրս գալուց հետո Շուշիկն ալկա չվերադարձավ Արեւլանի բնակարանը. ալնտեղից նա ուղիղ գնաց իր մոր մոտ։

X

Շուշիկի հեռանալուց արդեն չերկու ամիս եր տնցել։ Այդ բանն ուրախացրել եր Արեւլանին, մանավանդ, չերը նա տեղեկացել եր, վոր չերխան ծընվել և մեռած։

Այդ որվանից նա գրեթե քիչ եր լինում տանը: Ճաշում եր դրսում, գրեթե ամեն որ այցելում եր Կարագուլովներին և ուշ գիշերին եր միայն տուն գալիս ու քնում: Շատ անգամ ել նուշնիսկ որերով տուն չեր մտնում:

Հաճախ, չեր Կարագուլովի տանն եր լինում, Ելյան նվագում եր Արեւյանի. համար: Դաշնամուրի հնչունների տակ նիրհում եր Կարագուլովը, իսկ Արեւյանը խորը մտքերի մեջ եր ընկղմվում: Հատկապես վերջին որերն Արեւյանն արտասովոր տրամադրութեան մեջ եր: Գրասենյակում ամբողջ որը ջղալին վիճակ եր ապրում նա, հաճախ անտեղի կերպով բարկանում եր այս կամ այն աշխատակցի կամ միութեան անդամի վրա, իսկ տանը նա նստել չեր կարողանում. միակ տեղը, վորտեղ նա փոքր ի շատե լավ եր զգում իրեն, դա Կարագուլովի տունն եր, Ելյայի մոտ:

Գրեթե ամեն չերեկո Արեւյանն Ելյայի հետ դես ու դեն եր գնում, Ելյան կարծես հիպնոսել եր նրան, կարծես իշխում եր նրա հոգու վրա, այդ պատճառով ել Արեւյանն Ելյայի բոլոր ցանկութուններին ընդառաջ եր գնում, վորքան ել նա քննադատաբար մտտենար Ելյայի առաջարկներին: Հենց այդ եր պատճառը, վոր Արեւյանը չմերժեց Ելյային, չեր նա չորս հարյուր ուսուրի խնդրեց փոխարինաբար՝ դաշնամուր գնելու համար:

— Ի՞նչ կա վոր, մաս-մաս չես կվճարեմ քեզ. դա քեզ համար այնքան ել դժվար չի լինի, չեթե ցանկանաս՝ կտաս:— Յեւ Արեւյանը ցանկացավ ու տվեց:

— Յես ուզում եմ, վոր դու մի որ այնպիսի մի

բան անհա, վոր սլուրպրիդ լինի, հասկանձում ես, սլուրպրիդ, լես շատ եմ սիրում, լերբ անակնկալ կերպով վորեւե բան և պատահում ինձ հետ,— ասաց Ելլան մի որ, լերբ նրանք մենակ ելին Կարագուլովի տանը։ Արեւլանն Ելլալի ալս ցանկութլան մասին լերկար մտածեց և վերջը վորոշեց դրամ ուղարկել Թիֆլիս մի մապաղինի հասցեով՝ վորպեսզի ենտեղից Ելլալի ա-նունով ուղարկեն մի լավ կոստյում, գլխարկ, վերաբ-կու և կոշիկներ։ Այդպես ել արավ Արեւլանը և մի որ, լերբ նա Ելլալի մոտ գնաց, Ելլան ուրախ կերպով դիմավորեց Արեւլանին և շնորհակալութլուն հայտնեց նրան։

— Ինչ լւով ես մտածել, Վահրամ, լես ուրիշ ան-գամ ել այդպիսի սլուրպրիդների հանդիպել եմ Թիֆ-լիսում։

Այսպես անցնում ելին որերն ու շարաթները։

Մի որ գրասենյակում աշխատանքը վերջացնե-լուց հետո, Արեւլանը միքանի մատլան թևի տակ դը-րած դուրս լեկավ գրասենյակից։ Նա մոռլլ եր ու մտախոհ, գրասենյակից դուրս գալուն պես քալլերն ուղղեց դեպի տուն, վորտեղ միքանի որ և ինչ չի լե-ղել։ Ներս մտնելուն պես նա զգաց սենյակի սառնու-թլունը, և աչքին ընկավ դեռ ու զեն թափված տնա-լին իրերը, վորոնք, ալդ դրութլամբ, հուսահատ մար-դու կերպարանք ելին տալիս սենյակին։ Նա վառեց վառարանն ու սեղանի առաջ նստելով ըաց արավ հաշվեմատյաններն ու սկսեց ինչ-վոր հաշիվներ անել։

Մինչև ուշ գիշեր նստած եր Արեւլանը։ Հաշվե-մատյանների մեջ ինչ-վոր ուղղումներ եր անում, քնջում եր, նորից դրում, սակալն բան չեր դուրս գա-

լիս: Թվերը կարծես համառում էին, թվերը կարծես ըմբոստացել էին նրա դեմ ու վոչ մի զիջում չեին ուղղում անել:

Յերբ արդեն ուշ էր, Աբելյանն անկողին մտավ. նա զգաց, վոր այլևս վոչինչ չի կարելի անել, զգաց, վոր արդեն ամեն ինչ կորավ, ամեն ինչ...

— Վաղը կգան ստուգելու և վաղն այս ժամանակ չես ուրիշ տեղ կլինեմ,—մտածեց Աբելյանն անկողնում,—ամեն ինչ կորավ: Կորավ և՛ կարգերա, և՛ վստահութիւն...—Յեւ Աբելյանը խորը մտքերի մեջ ընկած շուռ ու մուռ էր գալիս անկողնի մեջ, թվերը հանգիստ չեին տալիս նրան, ահա մի չերեք, վոր անզիջում կերպով ցցվել է նրա աչքի առաջ. ահա չերկրորդը, չերրորդը և ահա չերեքների մի ամբողջ լեզեոն, վորոնք խժվժում են նրա աչքի առաջ, մըրջյունների պես կարծես կծոտում են նրա մարմինն ու նա անվերջ շուռ ու մուռ է գալիս անկողնի մեջ: Ահա և մարդիկ. Շուշիկը, վոր թախծոտ հայացքն ուղղել է դեպի նա. նրա աչքերից արցունքի չերկու կաթիլներ են գլորվում, նա աչքան խորը տխրութիւն մեջ է: Ահա և Նլյան, վոր դաշնամուրի առաջ նստած նվագում է և ուրախ կերպով ծիծաղում. դաշնամուրի հնչյունները և Նլյայի կշկշոցը կարծես լսում է Աբելյանը, կարծես իրոք այդ նա չե, նույն ինքը Նլյան: Բայց ինչպես չեկավ նա այստեղ. չի՞ վոր նա գնացել է, Թիֆլիս է գնացել... Ահա և նրանք, վոր շատ են, շատ-շատ, նրանք աչքան անզուրկ կերպով հոհում են իր վրա, նրանք աչքան անխիղճ են ու չար... Յեւ Աբելյանին թվում է, վոր բարձրանում են նրանց ձեռները, բարձրանում են, բայց ի՞նչ վըճ-

սեղիւ համար... Բանտարկութիւն... Նրանք հռհռում են, նրանք ծաղրում են կարծես իրեն... Ահա Հաբեթը, Հասմիկը, վորոնք ամենից բարձր են ծիծաղում կարծես, ամենից լալն են բաց արել իրենց բերանները...

Արեւլանը բարձրացավ, նստեց մահճակալի վրա, ճակատը շփեց և ինքն եւ չիմացավ, թե ինչո՞ւ բարձրացավ, կրկին պտուկեց քնելու, սակայն մինչև լույս դուրսելունը վոչնչով չփոխվեց, մինչև լույս Արեւլանի քունը հտարավ:

* * *

Հաջորդ որն Արեւլանը ձերբակալվեց: Ստուգումից պարզվեց, վոր նա աստիճանաբար լուրացրել է միութեան դրամներից 3.000 ուրլի: Այս լուրը կոչածակի արագութեամբ տարածվեց գավառական քաղաքի բնակիչների մեջ: Իսկ միքանի որ հետո տեղական լրագրում կոմունիստական կուսակցութեան գավառային կոմիտեն մի հայտարարութիւն տվեց, վոր կուսակցութեան թեկնածու Վահրամ Արեւլանը հեռացվում է կուսակցութեան շարքերից:

Խուզարկութեան ժամանակ Արեւլանի մոտ գտնվեց միայն 13 ուրլի դրամ և ուսերեն դրած մի փոքրիկ նամակ հետևյալ բովանդակութեամբ.

«Վահրամ,

Այսօր մեկնում եմ Թիֆլիս. հորեղբայրս ծանոցիվանդ է, այս մասին առավոյան հեռագիր սացա յեվ սխալած եմ այսօր յեվ յեք գնալ: Կաշխատեմ շուտ վերադառնալ. աշխատի պապայիս մեճակ յթողնել: Ելլա»:

Շաբաթներ ու ամիսներ անցան այն որից, չերբ դատարանն Արեւելանին յենթարկեց չերկու տարվա ազատազրկման:

Այժմ նա ուղղիչ տանն է. նրա դեմքը նիհարել է, փոս ընկած աչքերը մի տեսակ փալլ են ստացել, չերեսի մագերը չերկարել են: Նա ժամերով նստում է այնտեղ, պատուհանի առաջ և անձնատուր լինում իր մտքերին. շատ հաճախ նրա հիշողության մեջ արթնանում են դեպքեր և դեմքեր, վորոնք այս կամ այն կերպ կապ ունեն իր կյանքի միջանի տարվա պատմության հետ: Հիշում եր ակումբը, այգին, Շուշիկին, իրենց փոքրիկ և տաքուկ սենյակը, սոված ու դառն որերի տանջալից մղձավանջն եր հիշում և իջևանում անցկացրած գիշերները: Վորքան լավ եր տռաջին հանդիպումը Շուշիկի հետ, վորքան հաճելի ելին այն չերեկոները, չերբ թափվում եր ձյունը առատ ու հորդ փաթիլներով, իսկ ինքը մինչև ուշ գիշեր դեգերում եր փողոցում... Այո, շատ լավ եր, շատ լավ... և այդ բոլորի ֆոնի վրա կարծես նա տեսնում եր Նյային, կարագուլովին, վորոնք լիաթոք կերպով ծիծաղում են իր վրա...

Ուղղիչ տանն Արեւելանը միջանի մարդկանց հետ եր ծանոթացել, վորոնց հետ այնքան ել չեր շփվում նա: Մի որ, չերբ կալանավորներն զբոսնում ելին ուղղիչ տան ընդարձակ բակում, Արեւելանը ծանոթ մի դեմք տեսավ այնտեղ: Սկզբում նա զժվարանում եր հիշել այդ մարդուն, սակայն միջանի բոպե մտածելուց հետո՝ ճանաչեց նրան: Արեւելանը մոտեցավ նրան ու բարեկեց.

— Դուք ինձ չեք ճանաչում, — քաշվելով հարցրեց Արեւյանը։

— Վե՛հ, — տարակուսած պատասխանեց նա։

— Իսկ լին ձեզ ճանաչում եմ, թեև մի անգամ եմ տեսել միայն։ Այդ սրանից չերիտ տարի առաջ երբ լին հոգացած տերեւից ծխախոտ հլի պատրաստել ու քաղաքալին ալդու նստարանի վրա նստած՝ սպասում հլի ծխող մի անցորդի, վորպեսզի նրա ծխախոտի կրակով վառեմ իմ ծխախոտը։ Այդ ժամանակ դուք ծխելով լեկաք և նստեցիք իմ կողքին։ Յես վառեցի իմ ծխախոտը, իսկ դուք սպասում հլիք կանաչ գըլխարկով մի կնոջ։ Յես նուլնիսկ ձեր անունն հլ գիտեմ։ Կարծեմ Կոլյա լին կոչում ձեզ...

Կոլյան լսում հր ուշադիր կերպով։ Նրա աչքերի առաջ պատկերացան ալդ ըոլորը, նա հիշեց։

— Ուրեմն դուք հք լեղել ալն մարդը։ Կարծեմ ալն ժամանակ նոր հլիք լեկել Ռոստովից ու անդործ հլիք։

— Այն, ալդպես և։

— Իսկ հիմա... հիմա ինչո՞ւ լեք կալանքի տակ։ Արեւյանը դժվարանում հր անմիջապես պատասխանել նրան, սակալն շշնջաց։

— Զեղծարարութլան համար...

— Նշանակում և, դուք հլ իմ որին հք ընկել մտնավանդ լին՝ վոր մի աղջկա դոհ դարձա...

— Ի՞նչպես, — հետաքրքրվեց Արեւյանը — ո՞վ հր ալդ աղջիկը։

— Դա մի ծեր գեներալի աղջիկ հր։

Արեւյանը պահ մի վարանեց։

— Կարագուլովի՞...

— Այո, հենց այն աղջկա, վորին յես սպասելիս եմ յեղել քաղաքային այգում:

Մեկը Կոլյային կանչեց:

Արեւյանն ապշել եր կարծես: Նա նոր միայն հասկացավ, թե ինչո՞ւ մի անգամ սխալվեց Ելյան, իրեն Կոլյա կանչելով: Նա հիշեց Ելյայի գրած փոքրիկ տոմսը, վոր ձերբակալվելուց մի որ առաջ ստացավ նրանից. հիշեց նրան, Ելյային, վոր այնքան զզվելի չեր թվում Արեւյանին այդ րոպեին:

— Իմ խեղճ Շուշիկ, — շշնջաց Արեւյանը, — վորքան բարի ու պարզ եյիր դու, վորքան համեստ եյիր ու մեղմ. յես չկարողացա վարվել քեզ հետ, տանջեցի, այնքան տանջեցի, վոր այլևս անկարող չեղար ապրել ինձ հետ...

Արեւյանի աչքերից արցունքի յերկու խոշոր կաթիլներ գլորվեցին նրա վաղուց արդեն չսափրված աչտերի վրա:

* *
*

Այդուն եր, անձրևոտ առավոտ: Մի խումբ կալանավորների հետ միասին՝ մանիֆեստով դուրս գրվեց ուղղիչ տնից նաև Արեւյանը: Նա վերջին հրաժեշտը տվավ ուղղիչ տան ընկերներին և դուրս յեկավ փողոց: Նա արդեն վորոշել եր, թե ո՞ւր պետք է գնա ինքը, սակայն ժամանակն անհարմար եր: Արեւյանը քայլեց դեպի քաղաքային այգին, ուր նա շատ եր յեղել իր նեղ որերին: Այգում ծառերն ու նստարանները հարազատ թվացին Արեւյանին ու սիրելի: Անձրևից նա պատսպարվեց այգու մի խուլ անկյունում, մի ծառի տակ և սպասեց որը յերեկոյանալուն:

ժամերը դանդաղ ելին անցնում, Արեւլանը մտածում եր:

— Գնալ և ի՞նչ ասել առաջին հանդիպումին ասլն կնոջը, վարի հետ ասլնքան անողոք կերպով վարվեց նա: Բալց պետք և գնալ, գնալ, զղջալ նրա առաջ, ներողութուն խնդրել նրանից... նա ասլնքան մեղմ եր ու սիրալի, մի՞թե ասլ սիրո մի վերջին կալծն անգամ չի մնացել նրա մեջ... Այո, Արեւլանը կգնա նրա մոտ. կասի, վոր ինքն անողնական և ասլծմ ու խեղճ, վոր ինքն առաջվա, շատ առաջվա պես սիրում և նրան...

Որը չերեկոյացաւ: Արեւլանը հնամաշ կեպին քաշեց մինչև ականջները, վոր ճամբին վոչ-վոք չճանաչի իրեն և դուրս չեկաւ քաղաքային ասլզուց: Անձրեր դադարել եր Փողոցներում չերթեկող բազմութլան մեջ կորաւ Արեւլանը, ու շտապ քալրելով դուրս գալով գլխավոր փողոցից, թեքվեց դեպի Շուշիկենց բնակարանը: նա քալրերը դանդաղեցրել եր ու մտքերի մեջ խորասուզված՝ հանդարտ քալրելով առաջ եր գնում: Միքանի բոպելից հետո նա կանգնած եր ծանոթ շենքի առաջ: նրա սրտի բարախումն աբագացել եր, նա չեր համարձակվում ներս մտնել: Մինչ նա դռների առաջ կանգնած տատանվում եր, փողոցի դուռը բացվեց և դռների առաջ չերեաց Շուշիկը: Արեւլանը հանկարծակի չեկած՝ կանգնել եր շմած դրութլամբ. նա հալացքը գետնին եր հառել ու չեր համարձակվում կարծես գլուխը բարձրացնել: Շուշիկը լուրջ և սպրդդնած գեմքով կանգնել եր նրա առաջ: նրանք ճանաչել ելին իրար:

— Շուշիկ, — խեղդված ձայնով դիմեց Արեւլանը, — չես չեկել եմ ներողութլուն խնդրելու ասլն բոլոր տան-



Չանքների համար, վոր պատճառել եմ քեզ, չես զղշուծ եմ իմ բոլոր արարքների համար, վորոնք մի ամբողջ տարի թունալորել են քո կյանքը: Ներքի ինձ և հաստատիր ինձ հետ այն կապը, վորով կապված ելինք առաջ... շահ տ առաջ...

Արեւլանը հեկեկում եր, նրա արցունքները հորդաւ կերպով թափվում ելին դժգունած ալտերիվրա, իսկ Շուշիկը շարունակում եր հանդիսավոր լուսթյամբ նայել նրան:

— Ինձ պատճառած բոլոր տանջանքների համար մոռացել եմ արդեն, քո հասարակական արատը քեզ վոք-վոք չի ների, դու հասարակության թշնամի չես դարձել, Վահրամ, դու ոտար ու խորթ մարդ ես իմ դասակարգի համար: Գնա, Վահրամ, դնա, մենք ոտար ենք իրար, մեր մեջ վորեւե կապ չի կարող լինել այլևս. մեր մեջ չեղած կապը մեռավ մեր չերեխալի հետ միասին...

Շուշիկը հուզված եր և չերբ վերջացրեց ասելիքը, արագ ու վճռական քայլերով շարունակեց իր ճանապարհը:

Արեւլանն ընկճված հոգով կանգնել եր դռների առաջ. նրա սիրտը հեծկտում եր ցավից, շրթունքները դողում ելին հուզմունքից. իրիկնային կապույտ մթնշաղն իջել եր քաղաքի վրա, ամպամած չերկնակամարում աստղեր չեյին չերևում, լուսի նշույլ անգամ չեր փայլում այնտեղ:

— Ուր գնալ...



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045580

Г. Сарян.

ЧУЖОЙ ЧЕЛОВЕК.



ԿԻՆԸ 25 ԿՈՊ.